№ 100 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 11

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 100 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 11

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի: Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՂԲԱՅՐՔ

ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

Աւետրական խանութը սոյն ապրիլի 1-ից ՓՈԽԱԴՐՎԱԾ է Սիօնի փողոցից Ա. Մանթաշեանի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազազխանային կից:

Մուտքը բազազխանայից եւ Մանթաշեանի շարքերից (Манташ. ряды) №№ 30, 31, 32, 33, 40 և 41.

(Կ. շ. ու.) տո. 6—10

Շարունակվում է 1906 թ. «ՄՈՒՐՃ» ամսագրի բաժանորդագրութիւնը

Ամսագրի № 6-ից տպվելու է իբրև երկրորդ յաւելուած պ. Լէօի «ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ» ընդարձակ ուսումնասիրութիւնը փաստաթղթերով:

Բաժանորդագինը Ռուսաստանի և Պարսկաստանի համար տարեկան 10 ռուբլի, արտասահմանի համար 12 ռուբլի: Ծխական դպրոցների ուսուցչանոցների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանուորների համար բաժանորդագինն է ՈՒԹ ՌՈՒԲԼԻ: Բաժանորդագրութիւնը ընդունվում է. Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փող. № 13) և «Գուտտենբերգ» գրախանութում: Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію «Мурчъ». Արտասահմանից—Tiflis, Rédaction de la revue «Mourtch».

(տո) 2—5

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հողային խնդիրներ. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Մտքեր և փաստեր. Արմատաւորական բլոկ Արտասահմանեան մամուլ. Սօցիալ-դեմօկրատների համագումարը. Երկուանիդ զոհեր. Պարլամենտական գիւղացիական խումբը Դումայում. Պարլամենտական աշխատաւոր խմբակի ծրագիրը բանւորական հարցի վերաբերմամբ. Բարենորոգումներ հայ. եկեղեցու մէջ. Մաքրեցէք ասպարէզը. Սուրմալուի մանր վարկի ընկերութեան առաջին արտակարգ ժողովը. Ղրիմի հայոց դպրոցական գործողների ժողովները. Նամակներ խմբագրութեան. Պետական բիւջէին փոխառութիւնը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

IV

Դժուար է գուշակել թէ որքան շուտ կարող է հասնել այն ժամանակը, երբ գիւղատնտեսութեան մէջ գերիշխող կը հանդիսանայ խոշոր արդիւնագործութիւնը:

Դժուար է նախատեսել նոյն իսկ մօտաւորապէս:

Բայց եթէ մենք համատացած ենք, որ անտեսական երևոյթների ոգին կը պահպանէ իր ճակատագրական ույժը, առանց տատանումներ անելու այս ու այն կողմ, այն ժամանակ մենք կարող կը լինէինք ներկայացնել մեզ հետևեալ պատկերը:

Այն հողը, որ գտնվում է առանձին գիւղացիների ձեռքում իբրև նրանց հողաբաժինը, կամ սեփականութիւնը և մշակվում է առանձին-առանձին, իւրաքանչիւրի անասուններով և գործիքներով, կը դառնայ բոլոր գիւղացիների ընկերակցութեան կամ գիւղական համայնքի ստացուածք և կը մշակվի ամբողջ համայնքին պատկանող անասուններով և գործիքներով:

Ուրիշ խօսքերով՝ թէ հողով օգտվելը և թէ արդիւնաբերութեան գործիքները կը դառնան հասարակական:

Ապա եթէ ենթադրենք, որ և ամբողջ պետութիւնը կազմված կը լինի այդպիսի համայնքներից մի ցանցից և հողը կը լինի պետական կամ հասարակական ստացուածք, այն ժամանակ մեր առաջ կը ստեղծվի հողատիրական ասպարէզում սօցիալիստական կազմակերպութիւն, երկու հիմնական յատկանիշներով՝ հողի և արդիւնագործութեան համայնացումով կամ սօցիալացումով:

Այն ժամանակ երկրագործ ժողովուրդը հնարաւորութիւն կունենայ գործադրել գիւղատնտեսութեան մէջ թէ խոշոր տեխնիկական բարւոքումներ և կատարելութիւններ և թէ գիւղատնտեսական գիտութեան և տեխնիկայի բոլոր յաջողութիւնները և դարձնել արդիւնքները ամբողջ համայնքի սեփականութիւն, բաժանելով այդ արդիւնքները նախ և առաջ գործադրած աշխատանքի չափով և ապա մի որոշ աստիճան աչքի առաջ ունենալով համայնքի կարիքները:

V

Այստեղ սակայն հարց է առաջ գալիս, թէ արդեօք ներկայումս մեր գիւղացիութեան մէջ նկատվո՞ւմ է ձգտում դէպի սօցիալիստական իդէալը և թէ առհասարակ հաճելի՞ է նրան այդ իդէալը, իբրև մի գրաւիչ և նրա երևակայութիւնը յափշտակող մի զօրութիւն:

Այդ հարցին մենք կարող կը լինենք պատասխանել այսպէս: Ռուսաստանի գիւղացիութեան նշանաւոր մասը ձգտում է սօցիալացնել այն հողերը, որոնք ներկայումս նրա տրամադրութեան տակ են և ձգտում է սօցիալացրած հողերի շրջանի մէջ գցել աւելի ու աւելի մեծ տարածութիւններ, իսկ ինչ վերաբերում է արդիւնագործութեան սօցիալացման՝ գիւղացիութիւնը վերաբերվում է այդ բանին դեռ անվստահօրէն և նոյն իսկ ոչ բարեկամաբար:

Պարզենք այդ միտքը աւելի մանրամասն կերպով:

Մեր ժամանակակից գիւղացիութեան նշանաւոր մասը հողի կարիք է զգում և պահանջում է լրացուցիչ յաւելուածներ իր հողաբաժինների վրա: Անշուշտ այնտեղ, ուր կապալով են տրվում կալուածատիրական, արքունական կամ ուդելի հողեր, գիւղացիները հնարաւորութիւն ունեն լրացնել իրանց հողի պակասորդը, բայց յաճախ ինչպէս մասնաւոր, նոյնպէս և ուդէլի հողերը կապալով չեն տրվում այն պատճառով, որ նրանց վրա կազմակերպվում է սեփական տնտեսութիւն, որքան կարելի է կատարելագործված եղանակով:

Եւ անկասկած՝ գիւղական համայնքները կը ցանկանային, որ նրանց համար պիտանի բոլոր հողերը՝ թէ կապալով վերցրածները և թէ մօտակայքում գտնվողները, տրվէին համայնքներին իբրև նրանց մշտական տրամադրութեան տակ գտնվող հողեր և այդպիսով համայնացվէին կամ սօցիալացնվէին առ միշտ:

VI

Իսկ երբ հարցը գալիս է հողի շահագործման եղանակին կամ գիւղատնտեսական արդիւնագործութեան կազմակերպութեանը, մեր ներկայ գիւղացիութիւնը սակաւ և բացառիկ դէպքերում է գործադրում հասարակական արդիւնագործութիւններ և ընդհանրապէս կարելի է ասել, որ գերադասում է առանձին ծխերով օգտվելու եղանակը, այսինքն, գիւղական հողը բաժանում է համայնքի անդամների մէջ և մշակում է նրան առանձին ծխերի ույժերով և նրանց գործիքներով:

Գործնական կեանքի մէջ այդ եղանակը դեռ չէ սպառել իր գոյութեան իրաւունքը գիւղացիների համար: Մենք ամեն օր ականատես ենք, թէ ինչպէս մեծ, բազմանդամ ծուխը, որ կազմակերպել է մի լաւ տնտեսութիւն իր բոլոր բանուկ ույժերի հաւաքական գործակցութեամբ և որ աչքի է ընկնում իր հարստութեամբ և լիութեամբ, փոխանակ պահպանելու իր ամբողջութիւնը և զարգանալու ներքին բարւոքումներով, ընդհակառակը, բաժան-բաժան է դառնում, կազմելով նոր ծխեր և խոշոր տնտեսութիւնը փոխարկվում է փոքր տնտեսութիւնների:

Եւ չը նայելով այն հանգամանքին, որ տնտեսութիւնը այդ բաժանումից փչանում է, այնուամենայնիւ մեծ ծխերի մանրանալը առաջ է գնում առանց կանգ առնելու. փոքր հողատէրը թէև զգում է տեխնիքական զրկանքներ և տնտեսական անյարմարութիւններ, այնուամենայնիւ արգելք չէ լինում հողերի բաժանմանը և իր կողմից գործ է ածում բոլոր միջոցները ստեղծելու և զարգացնելու իր սեփական ինքնուրոյն տնտեսութիւնը:

Մենք լաւ գիտենք, որ այստեղ մեծ դեր է կատարում մի բարոյական հանգամանք, այն է, մարդկանց մէջ անհատականութեան զարգանալը և մեծ ընտանիքի անդամների ցանկութիւնը թէ ազատվելու այն ծանր կաշկանդներից, որ դնում է նրանց վրա նահապետական յարկը և թէ հնարաւորութիւն ունենալու ապրել աւելի ազատօրէն, բայց և այնպէս մենք մեր առաջ ունենք կեանքի փաստ, որը չէ կարելի արհամարհել կամ բացասել:

Բացի դրանից՝ որքան էլ մեծ լինի մեր հաւատը դէպի արդիւնագործութեան համայնացումը, մենք չենք կարող հերքել, որ գիւղացիների մէջ դեռ շատ թոյլ վստահութիւն կայ դէպի հասարակական հաւաքական արդիւնագործութիւնը: Մի քանի նահանգներում փորձեր արվեցին հասարակական վարուցանքս անելու, բայց մեծ մասամբ նրանք աջողութիւն չունեցան:

Այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ գիւղացիութիւնը թէև եռանդուն կերպով ձգտում է համայնացնել բոլոր այն հողերը, որոնք նրան հարկաւոր են իբրև անհրաժեշտութիւն, այնուամենայնիւ ներկայումս համայնական արդիւնագործութեան մէջ դեռ նա չէ տեսնում իր համար փրկարար միջոց իր բարօրութիւնը բարձրացնելու:

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ, մայիսի 10-ին, Թիֆլիսի բոլոր քաղաքամասերում տեղի ունեցին ընտրութիւններ:

Սկսած առաւօտեան ժամի 8-ից բացվեցին ընտրողական յանձնաժողովների պարապմունքները:

Նախ քան ընտրութեան սկսելը՝ յանձնաժողովները նայեցին քուէարկղները, փակեցին և կնքեցին, կազմելով այդ մասին արձանագրութիւն:

Յանձնաժողովների անդամները ցուցակագրում էին եկող ընտրողներին, ստուգում նրանց անունները և երբ հաստատվում էր ընտրողի անձնաւորութիւնը, քուէն գցվում էր քուէարկղի մէջ:

Այն ընտրողները, որոնց թէև չէին հասել հրաւէրներ քաղաքային վարչութեան կողմից, բայց ունէին ընտրելու իրաւունք և մտցրված էին ընտրողների ցուցակի մէջ, ստանում էին տոմսեր յանձնաժողովից և մասնակցում ընտրութեան:

Աչքի էին ընկնում ընտրողների չորս խմբեր, 1) ժողովրդական ազատութեան, 2) սօցիալ-դեմօկրատական, 3) արմատական բլոկի և 4) ռուս հայրենասէրների:

Ընտրողները մօտենում էին ընտրողական քուէարկղին պատրաստ ցուցակներով: Շատ սակաւ էին պատահում այնպիսիները, որոնք կազմած լինէին իրանց սեփական ցուցակը ընտրելիների համար:

Ընտրողական բիւրօների առաջ ամբողջ օրը խռնված էր մեծ բազմութիւն: Հետաքրքրվողների մէջ շատ կային այնպիսիներ, որոնք կապ չունէին ընտրութեան հետ, բայց ցանկանում էին իմանալ, թէ ի՞նչ կուսակցութեան ույժն է աւելի մեծ այս ու այն քաղաքամասում:

Ավլաբարցիների համար յատկացված էին յատուկ սենեակներ, որտեղ կուսակցութիւնները ունէին իրանց սեղանները, ցուցակները, ծրագիրները: Պատերի վրա կախված էին խոշոր տառերով գրված յայտարարութիւններ այս ու այն կուսակցութեան կողմից: Ավլաբարցիները որոնում էին կուսակիցներ հասարակութեան միջից:

Առհասարակ տիրում էր կարգ ամեն տեղ:

Վաղը կը հաղորդենք ընտրութիւնների հետևանքը:

Մի բան որ աչքի էր ընկնում երեկվայ ընտրութիւնների ժամանակ, դա սօցիալ-դեմօկրատների եռանդուն մասնակցութիւնն էր: Եւ անկասկած է, որ նրանք շատ քուէներ են վաստակել:

—

Մայիսի 9-ին, Թիֆլիսում, երեկոյեան 10 ժամին, երբ 3 անձինք կառքով անցնում էին Վորոնցովսկի փողոց վ դէպի Օրթաճալա, Շէյթան բազարում կառքից լսվեց սարսափելի ճայն. այդ ճայնից Թուրքերի մէջ սարսափ և յուզմունք առաջացաւ:

Գորոդովօյները կառքը կանգնեցրին և այդ պարոններին տարան ոստիկանատուն: Կառքի մէջ նստողներն էին Թիֆլիսի քաղաքացիներ Նիկոլայի Անանով, և Նիկոլայ Բեժանով, Արտեմ Դարչեվ,

Խուզարկելուց յետոյ նրանց մօտ ատրճանակներ չը գտնվեցին, բայց կառապանի խօսքով ատրճանակից կրակել է Անանովը:

Թուրքերը հանգստացան, երբ պատճառը իմացվեց:

Հաղորդելով ներկայ տեղեկութիւնը, մենք շատ կը ցանկանայինք, որ ինչպէս ստուգվէր և պարզվէր եղելութիւնը և եթէ արդարև այստեղ պրովոկացիան դեր է կատարում, ամեն միջոց գործ դնել, գցելու նրան իր արժանի մէջ:

—

Թիֆլիսի կենտրոնական նպաստամատոյց յանձնաժողովը իր վերջին նիստում քննութեան առաւ մի շարք հարցեր:

Շուշու նպաստամատոյց մասնաժողովը յայտնել է, թէ կարիքը քաղաքում և գաւառում ահագին է, մանաւանդ Խաչէն գաւառում և թէև մասնաժողովը դեռ իր տրամադրութեան ներքոյ ունի մօտ 6500 ր. և այդքան արժողութեամբ ալիւր, բայց նոր նպաստների կարիք կայ:

Նախիջևանի նոր յաջորդ Լեւոն վարդապետը յայտնում է յանձնաժողովին, որ նա օրինաւոր ընտրութեամբ կազմել է նպաստամատոյց մասնաժողով իր նախագահութեամբ: Կարիքը ահագին է. ժողովուրդը՝ սովամահ, շարունակ դիմում է գիւղերից օգնութիւն խնդրում և աղերսում, որ մինչև հունձը իրանց ուտելու հաց տրվի: Սակայն Նախիջևանի մասնաժողովը իր տրամադրութեան տակ ոչ դրամ ունի, ոչ ալիւր: Այսպէս, օրինակ, Ալահի թալանված գիւղը, 41 տուն, ամբողջովին տանջվում է սովից:

Շուշուց մի խումբ տիկիններ դիմել են յանձնաժողովին և յայտնել, որ կարիք կայ բանալ մի որբանոց այդ քաղաքում երկու սեռի որբերի համար, որոնք այժմ թափառում են փողոցներում անտիրական: Եթէ ամսական 300 ր. նպաստ տրվի, կարելի կը լինի ձեռնարկել որբանոցի բացման:

Զանգեզուրի Մինքեանդ գիւղի հայ համայնքը խնդրագրով դիմել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և օգնութիւն հայցել: Վեհ. Կաթողիկոսը այդ խնդրագիրը ուղարկել է յանձնաժողովի տնօրինութեան:

Շամշադինի, Բաշքենդի և Քարվանսարայի շրջանում, ուր ապաստան են գտել և բաղացիներից շատերը, կարիքը, հաւաքված տեղեկութիւնների համաձայն մեծ է և անհրաժեշտ է այդ տեղի գիւղերին օգնութեան հասնել:

Յանձնաժողովը կարևոր համարեց 1) խնդրել Շուշու մասնաժողովին գործադրել իր ունեցած միջոցները՝ ժողովրդի կարիքներին գոհացումն տալու և, բացի դրամից, աշխատել ունենալ ալիւրի պաշար, խոստանալով իր կողմից հարկաւոր օգնութիւնը տալու, 2) Նախիջևանի նորընտիր մասնաժողովին խնդրել ստանալ նախորդ մասնաժողովից կամ նախկին յաջորդ Թովմա վարդապետից հաշիւները, տեսնելու համար թէ ինչպէս են գործադրված կենտրոնական յանձնաժողովից Նախիջևանի աղետաւոր գիւղերի համար ուղարկված գումարները, ալիւրը, կարասիքը, հագուստեղէնը, երկրագործական գործիքները և այլն: Միևնոյն ժամանակ յանձնաժողովը կարևոր դատեց ուղարկել մասնաժողովին 1000 ռուբլի ալիւր գնելու Ալահի և այլ գիւղերի սովամահների համար. 3) Շուշում հիմնվելիք որբանոցի խնդիրը լուծելուց առաջ հարկ տեսնվեց լրացուցիչ տեղեկութիւններ պահանջել. 4) Մինքեանդ գիւղի համայնքի օգնութիւն հայցող խնդրագիրը ուղարկվեց Տաթևի յաջորդ Ներսէս վարդապետին, որի նախագահութեամբ գործում է մի նպաստամատոյց մասնաժողով և որին յանձնաժողովը ինչպէս և ղարաբաղցիների մասնաժողովը շարունակ նպաստներ է ուղարկում. 5) Շամշադինի վիճակի գիւղերին նպաստելու համար յանձնաժողովը հնարաւոր գտաւ յատկացնել 6000 ռուբլի և օգնութիւնը կատարել տեղական մասնաժողովների ձեռքով:

—

Բաղանիս, (Ղազախի գաւառ), մայիսի 4-ին.

Այժմ սովորութիւն է դարձել մարդ գողանալը. մի քանի օր առաջ Շխլու Թուրք գիւղից գողացան սարի Ասլլա անունով մէկին, որի եղբայրները բամասի պրիստաւին յայտնել են, թէ իրանց եղբորը անյայտացրել են քամառլուեցի Թուրք [?]այինչ գիւղացիները: Վերջինիս եղբորը կանչում է պրիստաւը և սպառնում է, որ եղբորը շուտով ներկայացնէ, որը սարումն է լինում: Ամսիս 2-ին Թուրքը գնում է սարը, որ եղբորը բերէ, 3-ին եղբոր և մի երեխայի հետ վերադառնալիս սարից, երբ մօտենում են «Մանդալ-Թալին», եղբայրները մէկ ճանապարհով են գնում, իսկ երեխան միւսով. փոքր ինչ առաջ գնալով՝ տեսնում են, որ ծառերի ետևը զինված մարդիկ կան. փախչելու հնարաւորութիւն չէ լինում. զինված մարդիկ հրամայում են տեղներից չը շարժվել և մօտենալով քշում են դէպի մի խոր ձոր՝ Լէմսի անունով. երեխային չեն նկատում, վերջինս էլ ծառի ետևը կուչ է գալիս և ամեն բան տեսնում և զինված մարդկանցը ճանաչում է. երկուսն էլ շխլուեցի եղբայրներ են լինում, անյայտացրած Ասլլայի եղբայրները, որոնք իմանալով նրանց սարից գալը՝ ճանապարհը կտրել և գողացել են: Երբ Թուրքերին քշած տանելիս են լինում մի կերպ, գոռում-գոչումով երեխային ասում են, որ յետ դառնայ և իրանց գիւղացիներին յայտնէ, որ օգնութեան հասնեն. դժբաղդաբար գիւղացիները բաւական հեռու են լինում, նրանք հանգստանալիս են լինում Գեօզ-Դաղում, որոնք իմանալուն պէս շտապում և տղերանց միայն խուրջինն են գտնում. երկուսից չեն կարողանում ետևներից գնալ, այլ դէպի գիւղն են գնում: Այսօր բազմաթիւ գիւղացիներ եկել էին և որոնում էին դեռ. ոչինչ չեն գտել: Եթէ երեխան չը լինէր և չը ճանաչէր, Թուրքերը հայերին կը վերագրէին:

Թուրքերին հարցնում էինք.—ինչ էք կարծում, հայերը կը լինեն սպանողները, —ոչ, պատասխանում էին, Թուրքերը, մենք մեր թշնամուն ճանաչում ենք, դուք հանգիստ կացէք:

Մի քանի օր առաջ Սալահլու Թուրք գիւղումն էլ մի մարդ են սպանել, սպանողն է Սիբիրից փախած Օմար Մուրուզ օղլին:

Սալահլու գիւղը ենթարկվում է 3000 ռուբ. տուգանքի, նրա համար, որ զէնքերը ժողովելու ժամանակ բոլորը չեն յանձնել և եթէ յիշեալ Օմարին իշխանութեանը չը յանձնեն, 4000 ռուբ. տուգանքի պէտք է ենթարկվեն:

Գեներալ Լեվիցկին ամեն կերպ աշխատում է Ղազախի գաւառում խաղաղութեան մշտապէս հաստատվելուն. թէ շրջաբերականներից և թէ գործունէութիւնից երևում է, որ պարոնը վերին աստիճանի անկողմնապահ, խստապահանջ մարդ է, միակ մարդը, որ թէ օրէնքի և թէ իր պաշտօնի վարկը բարձր է պահում: Եթէ պ. գեներալի ձեռք առած խիստ միջոցները չը լինէին, Թուրքերը մինչև այժմ էլ տուգանքը վճարած չէին լինի. 1/3 մասը տուգանքի բաժանեց վնասվածներին. ինչպէս և առաջ էի գրել, շատ մարդ, որ մի կոպէկի վնաս չի կրել, հաշիւներ էր պահանջում: Բաղանիս-Այրումներն էլ են փող ստացել, բայց որոնք չեն վնասվել, աւելի շատ են ստացել վնասվածներից. վերջինները գնալու են պ. Լեվիցկուն յայտնելու եղելութիւնը:

Մելիքսեդէկ քահանայ

Յ. Գ. Այսօր, ամսի 5-ին, Դամրչլար Թուրք գիւղում առաւօտեան ժամի 8-ին սպանել են Սէյիդ անունով մի Թուրքի 7 գնդակով: Սէյիդը իշխանութեանը յայտնել է, որ Ղարա-Համզլում հայերին սպանողները այս ինչ Թուրքերն են. սրա ցուցմունքով բանտարկեցին Ղալանդարին և մի երկրորդի. միւս ընկերները երկիւղ կրելով՝ թէ իրանց էլ բռնել կը տայ, սպանում են առաւօտեան դեռ չը լուսացած, երբ ձին տարել է արածացնելու: Սպանվողը եկաւ մեր գիւղը և գրել տուեց հայերին սպանողների անունները. «ես գիտեմ ինձ պէտք է սպանեն, բայց քանի կենդանի եմ անունները ասում եմ», ասաց. վկաների անունները էլ գրել տուեց: Սպանողներն ասում են աքսորաբարյի Թուրքեր են, որոնք հայերին սպանել են:

Նոյն

—

Բագու, 9 մայիսի: Արիւնահեղ ընդհարումների դէպքեր վերջին օրերս յաճախ են կրկնվում: Այսպէս, օրինակ, մայիսի 8-ին Կլադբիշչենսկի փողոցում, այդ օրը բանից ազատված երկու պարսիկներ սպանեցին իրար: Վիրաւորված է դեղագործ Բէկկէրը: Յարձակում եկաւ Կասպիական գործարանի գրասենեակի վրա, որի ժամանակ յափշտակված է 16,000 ռուբլի: Չարագործները բռնվել են փախուստի ժամանակ. մի մասը ծեծվել, իսկ միւս մասը ձերբակալվել են:

(Հեռ. Գործ.)

—

Պարիզի «Պրօ Արմենիա» թերթի մայիսի 5-ի համարում զետեղված են հետևեալ տեղեկութիւնները Կիլիկիայի մասին:

«Հայերի ձերբակալութիւնները շարունակվում են: Նորերս, այստեղ բերեցին Զէյթունում, Մարաշում, Ադանայում և Հաջինում բանտարկված մարդկանց: Հայերի վիճակը վշտալի է, մանաւանդ Զէյթունի հայերի վիճակը: Զէյթունի զինուորական հրամանատարը մեռաւ մօտերս: Հալէպի նոր կառավարիչ Նազիմ փաշան մի ճշմարիտ դահճ է. դա նա է, որ հրամայում է քաղաքական ամբաստանեալների ձերբակալութիւնները և նրանց Հալէպ է բերել տալիս իր ձեռքով դատելու: Ռուսաստանից եկած 10,000 չերքէզներ բնակութիւն են հաստատել Զէյթունի շրջակայքում: Այդ չերքէզներին կերակրելու համար ստիպում են գիւղացիներին եկող տարիների հարկերը այժմ վճարել»:

—

Մայիսի 8-ին Նոյեն Մեծութիւնները, օգոստափառ երեխաներով և իշխան Դիմիտրի Պաւլովիչի հետ «Дозорный» նաւով, ցերեկվայ ժամի 3 1/4-ին Պետերհօֆից մեկնեցին Կրօնշտադտի նաւակայանը, ուր անցան կայսերական «Շտանդարտ» զբօսանաւակը:

—

ՄՈՍԿՎԱ: Մօսկվա վերադարձած Պետական Դումայի անդամներ Կրիստոֆնիկով և Շիպով յայտնեցին, որ Պետական Խորհուրդը անորոշ ժամանակով հրաժարվել է օրէնսդրական որև է քայլ անելուց յօգուտ Դումայի, վախենալով թերևս ծագող կոնֆլիկտից:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պետական Խորհուրդը պալատական վարչութեան միջոցով յանձնեց Թագաւոր Կայսրին Խորհրդի պատասխան-ուղերձը—նախագահի ամենահպատակ զեկուցագրի հետ միասին: Խորհրդի ուղերձը արդէն յանձնված է Կայսրին:

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Թուրք մամուլը, ինչպէս Ռուսաստանում լոյս տեսնող ամեն լեզուով լրագիրները, այս րօպէիս զբաղված է Պետական Դումայով: «Հայաթ»-ը «Պետական Դումայի բացումը» տիտղոսակիր առաջնորդողում ցնծութիւն է յայտնում այդ «պատմական» դէպքի առիթով, որը «ռուսական պետութիւնն էլ մտցնում է քաղաքակրթված և սահմանադիր կառավարութիւնների շարքը»: Թուրք լրագիրը ամեն ինչ վարդագոյն է տեսնում, որովհետև «երկրի ամեն գործերի մասին օրէնքներ և կանոններ հաստատելու իրաւունքը ձրիակեր բիւրօկրատիայի ձեռքից անցնում է ժողովրդի ներկայացուցիչներին: Ի՜նչ երջանկութիւն: Այսուհետև հարիւր յիսուն միլիօն ժողովուրդները բիւրօկրատիայի բռնակալ ճիրաններից ազատվելով՝ մարդկային և քաղաքակրթական իրաւունքների առաջին աստիճանի տէր եղան: Գերութիւնն ու բացարձակ իրաւազրկութիւնը փոխվեցին ազատութեան և ինքնիշխանութեան»:

Այդ դրախտը ձեռք բերվեց մեծ զոհերի գնով: Կռիւը ծանր եղաւ: Բայց լոյսը յաղթեց խաւարին: Ճիշտ է, շարունակում է միամիտ լրագիրը, Դուման եւրօպական պարլամենտների լիազօրութիւններն ու իրաւունքները չունի, բայց այդ էլ, փառք ամենակարողին, կամաց-կամաց կը լինի: Ոգևորութիւնից դուրս կորցրած լրագիրը մոռանում է թէ կայ «Հիմնական օրէնքների նախագիծ» կոչվող մի շղթայ, որ կապկպում է Դումայի ձեռքերը և «երկրի ամեն գործերի մասին օրէնքներ ու կանոններ հաստատելու իրաւունքը» դնում է դարձեալ «ձրիակեր բիւրօկրատիայի ճիրանների» մէջ:

«Ոտքի տակից հողը փախչող բիւրօկրատիան, աւելացնում է «Հայաթ»-ը, լուրեր է տարածում, որ իբր Դուման գումարվելուց յետոյ պէտք է ցրվի: Բայց դա բացարձակ սուտ է, որովհետև ժողովրդի յոյսի միակ ապաւէնը այդ հաստատութիւնն է: Կասկած չը կայ, որ եթէ Դուման փակվի նորից կը սկսվեն խառնակութիւններն ու յեղափոխութիւնները: Դումայի փակումը կը նշանակէ 150 միլիօն ժողովրդի ոչնչացումը:

«Մեր կարծիքով, վերջացնում է լրագիրը, այդ տեսակ լուրերը սպառնալիքի, ահաբեկման բնաւորութիւն են կրում, դրա համար են մէջտեղ նետված: Բնաւ չը պէտք է հաւատ ընծայել այդ տեսակ լուրերին: Ընդհակառակը աւելի մեծ ու խիստ պահանջներ պէտք է դնել և պէտք է անբաւական լինել բիւրօկրատ մինիստրներից: Աշխատենք որ Թագաւորի և ժողովրդի միջև բիւրօկրատիան պարիսպ չը քաշէ: Պետական Դումայի պաշտօնապէս բացման ժամանակ, փառահեղ կերպով Թագաւոր կայսրի արտասանած գեղեցիկ ու պերճախօս ճառից այն է հասկացվում, որ Նորին Մեծութիւնն էլ երկրի բարեկարգութեան յոյսը դրել է միայն Պետական Դումայի և ժողովրդի ներկայացուցիչների վրա: Պէտք է սպասել վախճանին:

Յամենայն դէպս շնորհաւորում ենք մեր հայրենակիցներին Պետական Դումայի բացման համար, և խնդրենք բարձրեալն Աստուծոյ, որ արժանացնէ մեզ մեր ցանկութիւններին»:

Ինչպէս տեսնում էք բաւական ուժեղ հաւատ ունի Թուրք լրագիրը: Մաղթենք մեր կողմից, որ յուսախաբ չը լինի:

—

Թուրքական մի այլ օրգան «Իրշադը» Պետական Դումային նուիրում է մի քանի առաջնորդողներ:

Սուիթից օգտվելով նա տալիս է Թուրք քաղաքականապէս տհաս ժողովրդին 89-ի ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան պատմութիւնը շատ համառօտ գծերով, ցոյց է տալիս թէ ինչ ֆրանսիացին իր ազատութեան, մարդկային իրաւունքների համար նոյն իսկ Թագաւորի գլուխը կտրելու չափ առաջ գնաց:

Այնուհետև, մի այլ յօդուածում, Աղայեվ Նախ-

խօսում է «Հիմնական օրէնքների նախագծի» բնաւորութեան մասին և յետոյ Դումայի մեծամասնութեան՝ սահմանադիր-ռամկավարների պահանջների մասին, որոնք չէզոքացնում են հիմնական օրէնքները:

«Կասկած անգամ չէ կարող լինել, վերջացնում է Թուրք լրագիրը, որ կառավարութիւնը սահմանադիր-ռամկավարների պահանջներին բաւականութիւն չը պէտք է տայ: Կռիւը երկուսի մէջ շատ հաւանական է»:

—

Թիֆլիսում հրատարակվող սօցիալ-դէմօկրատական «Կայծ» թերթը նոյնպէս մասնակցեց լիազօրների ընտրութեան: Երէկվայ իր համարում նա հրատարակել է կոչ, որով հրաւիրում է ձայն տալու սօցիալ-դէմօկրատ թեկնածուներին:

### ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ
XLI

Երէկ, Թիֆլիսում, ընտրական պայքար էր: Առաջին անգամ մեր ժողովուրդը կոչվում էր մօտենալու ընտրական սափորին և իբրև քաղաքացի տալու իր քուէն: Առաջին անգամ քաղաքական կուսակցութիւնները, իրար դէմ գալով, մղում էին կռիւ, բայց կռիւ ոչ կօպիտ, նիւթական զէնքով, այլ խօսքով, մամուլով, քարոզով, պրօկլամացիաներով, բանաւոր և գրաւոր ագիտացիայով:

Իսկոյն զգում էիք, որ այժմ այլ ևս նախկին կեանքը չէ, իսկոյն զգում էիք, որ մի բան փոխվել է, մի նոր կեանք, մի նոր հոսանք է սկսվել: Դուք տեսնում էիք երիտասարդ, Թարմ դէմքեր, պատանիներ, ոգևորված, շարժուն, կարմրատակած վազվզելիս, համոզելիս այս և՛ այն քաղաքացուն, որ իր քուէն անպատճառ այս կամ այն կուսակցութեան թեկնածուներին տայ: Որպիսի եռանդով, աւիւնով, անկեղծ շեշտով այդ պատանին համոզում, յորդորում է ձեզ տալ ձեր քուէն յօգուտ սօցիալ-դէմօկրատների, կամ յօգուտ «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան:

Եւ դուք զգում էիք, որ քաղաքական կեանքը արդէն սկսվել է մեր մէջ, թէև թոյլ, դեռ ոչ-զօրեղ հոսանքով, բայց այնպիսի հոսանքով, որ գնալով գնալով պէտք է ուժեղանայ, յորդանայ և վերածվի հեղեղի:

Երէկ, երբ ես գրում էի այս տողերը, դեռ յայտնի չէին ընտրութիւնների հետեւանքները: Սակայն մի բան պարզ էր. այդ այն է, որ պայքարը կենտրոնացել էր իսկապէս երկու մեծ կուսակցութիւնների մէջ—սօցիալ-դէմօկրատների և «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան մէջ: Եւ երևի, յաղթանակը այդ երկու կուսակցութիւններից մինը կը տանէ: Միւս կուսակցութիւնները—արմատականների, ֆեդերալիստների և աւտօնօմիստների բլօկը և «հայրենասիրական» կուսակցութիւնը Թւում էր որ շատ քիչ շանսեր ունեն:

Ինձ վերին աստիճանի հաճելի էր տեսնել այն խանդը, ոգևորութիւնը, որ գործ էին դնում սափորների առաջ սօցիալ-դէմօկրատները: Իսկոյն երևում էր, որ լաւ կազմակերպված ոյժեր ունեն և ընտրական պայքարի մէջ նորեկներ չեն, թէև Թիֆլիսում առաջին անգամ մասնակցում են քաղաքական ընտրութիւններին: Ի հարկէ, ես, իբրև սահմանադիր-ռամկավար, կը փափագէի, որ յաղթանակը տանէր մեր կուսակցութիւնը, բայց եթէ յաղթանակը տանէին սօցիալ-դէմօկրատները, ամենևին չեմ տխրի, որովհետև դա մի նոր ապացոյց կը լինի, որ ամեն մի պայքարի մէջ յաղթական կարող է դուրս գալ միայն նա, ով ունի որոշ, պարզ հասարակական և սօցիալական իդէալներ, ով ունի մեկին, պարզ ծրագիր, քաղաքական դաւանանք, ով չէ փախչում պայքարից մասնակցութեամբ, հեռանալով բօյկօտ այնտեղ, ուր ամեն ինչ քիչ նպատակայարմար և պէտքական է:

Շահրիար

### ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԼՕԿԸ
(«Волна» լրագրի № 1-ից)

—

Այն բոլոր հակառակորդներից, որոնց հետ տեղական սօցիալ-դէմօկրատները մայիսի 10-ին կռիւ պէտք է մղեն, այսպէս կոչուած «արմատական բլօկը» ամենից վտանգաւորն է: Այդ միութիւնը, բաղկացած՝ «արմատական կուսակցութիւնից», «վրաց դէմօկրատական» կուսակցութիւնից և «սօցիալ-ֆեդերալիստների» կուսակցութիւններից, այդ «բլօկը» կազմվեց այն առանձին նպատակով, որպէս զի տապալէն սօցիալ-դէմօկրատների թեկնածուներին: Բոլոր բուրժուա կուսակցութիւնները, մինչև իսկ աւելի արմատականները, նոյն իսկ իրանք իրանց «սօցիալիստական» անուանողները մասնակցեցին սօցիալ-դէմօկրատների դէմ նւիրված այդ դաւադրութեան: Սօցիալ-դէմօկրատների դափնիները նրանց քունը խանգարում է: Նրանք բոլորը ուզում են կորզել ժողովուրդը այդ անախորժ առաքեալների ազդեցութիւնից, «պրօլետարիատի դիկտատուրայից»:

Թշնամու բնաւորութեան հետ ծանօթանալը յաղթութեան առաջին գրաւականն է: Դրա համար էլ աւելի մօտիկից նայենք այդ տարրերին, որոնցից բաղկացած է՝ այդ հռչակաւոր «բլօկը»:

Ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ այդ բլօկի առաջին երկու կուսակցութիւնները—բոլորովին անծանօթ են Թիֆլիսի բնակիչներին: Սրանք երկուսն էլ բոլորովին նոր կուսակցութիւններ են, որոնք կազմվել են նախընտրական ագիտացիայի ժամանակ:

«Արմատական կուսակցութեան» պատմութիւնը աւելի քան պարզ է: Այն հրամանից յետոյ, որը յայտարարում էր ապրիլի 27-ին Դումայի գումարումը, իշխան Ա. Արղութեան-Երկայնաբազուկի 22 յարգողները մտադրեցին անպատճառ նրան ընտրել Դումայի անդամ: Նրանք յոյս ունէին այն բանի վրա, որ իշ. Արղութեանը քաղաքում վայելում է մեծ ժողովրդականութիւն, և որ նրա անուան շուրջը կարելի կը լինի կազմել բաւական ուժեղ կուսակցութիւն: Այդ նպատակով իշխանի յարգողները սկսան շրջել տնից տուն և հաւաքել իրանց համար կողմնակիցներ, ցուցադրում էին իշխանի անցեալը, նրա անհաշտ, անողոք արմատականութիւնը և շովինիզմից ազատ լինելը: Մի խօսքով կազմվեց անկուսակցական «Արղութեանի կուսակցութիւնը», համախմբված՝ ոչ թէ մի դրօշի, մի ծրագրի, այլ իրան, իշխան Արղութեան - Երկայնաբազուկի անձնաւորութեան շուրջը: Այդ «կուսակցութեան» հիմնադիրներին ցուցադրում էին, և իրանք էլ շատ լաւ զգում էին, որ կուսակցութիւնը կազմված լինելով անձնաւորութեան և ոչ թէ դրօշի շուրջը, հասարակութեան մէջ մտցնում էին քաղաքական անբարոյականացում: Եւ նրանք սկսեցին երկար չափել, չափչփել, թէ ինչպէս դարմանեն այդ ցաւը, ինչպէս ազատվեն այդ «անկուսակցական» անախորժ յորջորջումից: «Մեզ մեղադրում են նրանում, որ մենք ծրագիր չունենք. ուրեմն ձեռք կը բերենք այդ ծրագիրը: Բարեբաղդաբար Ռուսաստանում այդ բարիքից շատ կայ»: Եւ նրանք կանգ առան արմատական կուսակցութեան ծրագրի վրա և ընդունեցին նրան իբրև իրանց ծրագիրը: Բայց, ի հարկէ, դրանով նրանք նոյնքան քիչ արմատական դարձան, որքան պ. Խատիսեանը կը դառնար սօցիալիստ, եթէ ընդունէր սօցիալիստական ծրագիրը կամ որքան քիչ նրանց դաշնակից ֆեդերալիստ կուսակցութիւնը սօցիալիստ դարձաւ ընդունելով «սօցիալիստական» յորջորջումը: «Արմատական կուսակցութիւնը» կազմվեց առանձին նպատակով. այն է՝ մտցնել Դումայում իշխ. Արղութեանին: Այդ կուսակցութիւնը ոչ մի արժէք չէ ներկայացնում անցեալում. նա ուզում է միայն օգտվել ժողովրդական ներկայ շարժումից: Նա առաջվայ նման մնում է «Արղութեանի կուսակցութիւն» և միայն պատշաճութեան համար իր ուսերի վրա գցեց արմատականների ծրագիրը: Ծրագրի ընդունելը—միայն ընտրողական մանեւր է և ուրիշ ոչինչ:

«Բլօկի» երկրորդ բաղկացուցիչ մասը «վրաց դէմօկրատական կուսակցութիւնն է»: Բաւական է միայն կարդալ այդ կուսակցութեան ծրագրի առաջին կէտը, որպէս զի շօվինիզմի հոտը խփէ ձեր քթին: Կուսակցութիւնը ցանկանում է վերակենդանացնել «Վրաստանի և Ռուսաստանի մէջ եղած պայմանագրական յարաբերութիւնները» և շնորհիւ այդ պայմանագրական յարաբերութիւնների «պէտք է ձգտէ ձեռք բերել Վրաստանի ներքին գործերի ինքնավարութիւն»: Լաւ է, որ միապետութիւնը այժմ մօդա չէ, եթէ ոչ «պայմանագրական յարաբերութիւնները» կենթադրէին և վրաց թագաւորութիւն.—իսկ պ. պ. «դէմօկրատների» ախորժակը, ինչպէս երևում է, այնքան էլ վատ չէ. «Վրաստանի հող են կազմում Թիֆլիսի և Քութայիսի նահանգները, Բաթումի վիճակը (область), Սուխումի շրջանը, Զաքաթալայի վիճակը»: Ինչու այդքան համեստ լինել. վատ չէր լինի, պարոններ, միացնել նոյնպէս Ելիզավէտպօլի նահանգը. չէ՞ որ Թամարա թագուհին մի ժամանակ տիրում էր նրան: Յետոյ, «Վրաստանի ինքնավարութեան» ապագայ վարիչները տարածում են իրանց ողորմած ուշադրութիւնը և ապագայ «եկւոր հպատակների» վրա. «այն ազգութիւնների իրաւունքները, որոնք բնակվում են Վրաստանի հողի վրա, պէտք է յայտարարվեն վրաց ինքնավարութեան օրէնքներով»: Ահա ձեզ այս նոր թխված դէմօկրատների ծրագրի «մեխը». Մնացեալ կէտերը ընտրված են զանազան ծրագրներից, համաձայն «շուկայի» պահանջներին:

«Բլօկի» երրորդ բաղկացուցիչ մասը «սօցիալիստ-ֆեդերալիստների կուսակցութիւնը» ծնունդ առաւ նոյնպէս ազգային շահերի պաշտպանելու համար, միջազգային սօցիալ-դէմօկրատիական կուսակցութեան չար ձգտումների դէմ: Ապագայ ֆեդերալիստները սկսեցին քարոզել, որ հարկաւոր է ազգային (վրացական) բուրժուազիան և ազգային արդիւնաբերութիւնը պաշտպանել միւս ազգութիւնների (իմա հայերի) բուրժուազիայի և արդիւնաբերութեան դէմ: Ֆեդերալիստների կուսակցութեան ապագայ ղեկավարներից, լիդերներից մէկը՝ ֆեդերալիստների ապագայ օրգանի էջերում յանձնարարում էր արհեստականապէս հաստատել վրաց բուրժուազիա ի հաշիւ վրաց պրօլետարիատի, և արհեստական մաքսային տուրքեր՝ օտարախօս (հայ) կապիտալիստների ապրանքների վրա, որպէս բօյկօտ նրանց ապրանքների, և այլն: Ի հարկէ, այդ տեսակ քարոզը համակրութիւն չը գտաւ դեռ նոր զարթնող աշխատաւոր մասսայի կողմից. իսկ այդ բուրժուական կուսակցութիւնը շատ մեծ կարիք ունէր մասսայի պաշտպանութեան: Տեսնելով՝ որ աշխատաւորների առաջնակարգ մասում, պրօլետարիատի մէջ, զարմանալի արագութեամբ տարածվում է սօցիալիստական վարդապետութիւնը, մեր նացիօնալիստները հասկացան, որ առանց սօցիալիզմի այնքան հեռու չի կարելի գնալ: Առանց երկար մտածելու, մի գեղեցիկ օր հաւաքվեցին Ժընէվում և վճռեցին իրանց յայտարարել սօցիալիստ: Միայն հարկաւոր էր գտնել մի սօցիալիստական ծրագիր. իրանց խելքով մշակել սօցիալիստական ծրագիր—այդ նրանց համար անկարելի էր. ապա սուրբը սազին, որ ծնէ մի կով! ընդունել սօցիալ-դէմօկրատների ծրագիրը՝ անյարմար էր. Նրանք խաբվող պառուղներից չէին! Եւ մեր նացիօնալիստները յայտարարեցին որ նրանց դուր է գալիս սօցիալ-յեղափոխականների ծրագիրը: Ընդունելով սօցիալիստական ծրագիր, պէտք էր և՛ ընդունել սօցիալիստական կոչումը! Եւ իրանց անուանեցին «սօցիալիստ-ֆեդէրալիստներ» և մեր հին ծանօթները իրանց հարազատ ազգի առաջ դուրս եկան այդ նոր զգեստաւորումով: Սօցիալ-դէմօկրատները ճանաչելով իրանց հին ծանօթներին այդպիսի անհամապատասխան զգեստաւորման մէջ, սկսեցին կասկած յայտնել նրանց սօցիալիզմի անկեղծութեան մասին: Իսկ սրանք մինչև անգամ վիրաւորվեցին. «Հաճեցէք տեսնել. ահա մեր ծրագիրը» երկարում էին իւրաքանչիւր կասկածողին:

Նախընտրական ագիտացիան վերջնականապէս պարզեց ֆեդէրալիստների իսկական էութիւնը և ցոյց տուեց նրանց համապատասխան տեղը կուսակցութիւնների դասաւորութեան մէջ: Պէտք էր ընտրութիւն կատարել ցածր խաւերի կուսակցութեան՝ սօցիալ-դէմօկրատների և բուրժուական ինտելլիգենցիայի՝ Արղութեանի կուսակցութեան միջև: Կարճ տատանումից յետոյ, դասակարգային բնազդը ուժգնօրէն մղեց ֆեդերալիստներին բուրժուական ինտելլիգենցիայի գիրկը, ստիպելով նրանց կրանակ դարձնել սօցիալիզմի պլատոնական յափշտակումին: Ֆեդերալիստները երդվում են, որ նրանք չեն հրաժարվում սօցիալիզմից, բայց որքան որ էլ երդում պատառ լինեն, որքան որ էլ ուժեղ լինեն նրանց մէջ սօցիալիստական համակրութիւնները, նոյնքան հաւատավում է այն անսասան ճշմարտութիւնը, թէ աշխարհային, օբեկտիւ ոյժը՝ դասակարգային բնազդը աւելի ուժեղ է, քան ենթակայական, սուբեկտիւ ամեն յափշտակում: Բուրժուական ինտելիգենցիայի կուսակցութիւնը թիւրիմացութեամբ միայն կարող էր իրան անուանել սօցիալիստ: Վաղուց ժամանակ էր հասկանալու այդ բանը:

Ահա թէ ինչ բան է բուրժուական ինտելիգենցիայի այդ «բլօկը»: Բոլոր ազգութիւնների «անուշահոտ ծաղիկները» (Միխայլովսկու Թափչքաւոր խօսքով) միացան:

Այդ միացումը առաջին հայեացքից կարող է տարօրինակ թւալ. թէ ինչպէս վրացական ազգայնական կուսակցութիւնները, որոնք մեծացել էին թշնամական հողի վրա հայերի հետ և որոնք մինչև այժմս էլ չեն ազատված խոշոր չափով շովինիզմից, ինչպէս այդ կուսակցութիւնները կարող էին կանխամտածութեամբ միանալ հայ «արմատական կուսակցութեան» հետ: Միթէ նրանց համար այլ ևս գաղտնիք է, որ այդ կուսակցութեան դրօշի վրա գրված է միայն մի նշանաբան. «իշխան Արղութեան-Երկայնաբազուկ»: Եւ այս տարօրինակութիւնը շատ հեշտութեամբ բացատրվում է դասակարգային կռւի թէօրիայով. զանազան ազգութիւնների բուրժուական դասակարգերը կռւում էին իրար դէմ մինչև այն ժամանակ, երբ ոչ մի վտանգ չկար ճնշված դասակարգի, պրօլետարիատի կողմից, բայց երբ արդէն պրօլետարիատը սկսում է զարթնել, և բուրժուական դասակարգերին վտանգ է սպառնում, նրանք մոռանում են իրանց ազգայնական թշնամութիւնը, միմեանց ձեռք են մեկնում և՝ «պրօլետարներ բոլոր երկրների միացէք» լօզունգին հակադրում են «բուրժուա դասակարգեր բոլոր երկրների միացէք»-ը! Այդպէս է եղել միշտ և ամեն տեղ, մի և նոյնը տեսնում ենք և՛ մեզ մօտ: «Բոլոր ազգութիւնների անուշահոտ ծաղիկները միացան»:

Մինչև այժմ ո՞րտեղ էին նրանք: Ինչո՞վ օգնեցին նրանք ժողովրդին բռնակալութեան հետ ունեցած յուսահատական կռւի մէջ: Այն ժամանակ, երբ ժողովուրդը իր արիւնով ոռոգում էր փողոցները, այն ժամանակ երբ գազանացած ռէակցիան ազատութեան մարտիկներին գնդակահարում էր—որտեղ էիք դուք: Տարօրինակ հարց! Նրանք նստել էին իրանց կաբինէտներում, պատուհաններից տեսնում էին այն սարսափները, որոնք կատարվում էին ժողովրդի վրա և ցաւակցութեան արցունքներ էին հոսեցնում: Դրանից աւել ինչ կարող էին անել: Ժողովրդի գործն է զէնքը ձեռքին կռւել ազատութեան համար: Բուրժուական ինտելիգենտները—«Անուշահոտ ծաղիկներ են», որոնք պէտք է կուլ տան բոյսերի ամենալաւ հիւթերը»: Նրանց գործն է՝ օգտվել այդ ազատութեան պտուղներով—ընտրվել պատուաւոր պաշտօնների համար, ընտրվել ժողովրդական պատգամաւոր!

Աշխատանքի առանձնայատուկ բաժանում!

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

—

Պետական Դուման շարունակում է զբաղեցնել արտասահմանում թէ մամուլը և թէ քաղաքական ականաւոր գործիչներին: Մի այնպիսի հռչակաւոր քաղաքական գործիչ, ինչպիսին պատմաբան Ժան Ժօրէսն է, չէ կարող լռութեամբ անցնել այդ արտակարգ երևոյթի վերաբերմամբ, որ Ռուսաստանի պարլամենտական կեանքի համար առաջին խոշոր էտապն է: Եւ ահա թէ նա ինչ է ասում l'Humanité-ում տպագրված իր մի յօդուածի մէջ Պետական Դումայի առիթով: Նախ շեշտելով, որ հիմնական օրէնքները հրատարակելով կառավարութիւնը մարտահրաւէր է նետում ժողովրդական ներկայացուցիչներին, Ժօրէսը ասում է.

Պալատի յաւակնութիւնների և ժողովրդի կամքի մէջ կօնֆլիկտը անխուսափելի է: Բայց կը համարձակվի, արդեօք, Պալատը կօնֆլիկտի դիմելու: Դուման զօրեղ է երեք տեսակէտից: Նախ որ նա վճռական է և եռանդուն: Կարելի էր երկիւղ կրել, որ նրա ղեկավարները, «ինտելլիգենտները», հէնց սկզբից ապարդիւն դատողութիւնների մէջ կը խորասուզվէին, ճիշտ այնպէս, ինչպէս որ Մարքսը նոյն բանի համար անխնայ մեղադրում էր 1848 թւականի գերմանական պարլամենտին, ասելով, որ նրանց մէջ նա սպառեց իր քաղաքական ոյժը: Միանգամից պահանջելով ամնիստիա, Դուման խաղաց իր գործնական դերը: Նա ստիպում է ցարիզմին խօսել և յարել ժողովրդին կամ կանգնել նրա դէմ: Դուման ինքը պարտաւորվում է սպառնալիքի ներքոյ մտնել իրան արհամարհանքի և խայտառակութեան, եռանդուն միջոցներ ձեռք առնել, ամնիստիա կորզելու համար, եթէ միայն Պալատը կը հրաժարվի յօժարակամ տալ: Ահա այդպիսով միանգամից ծագեց կռիւը մի հասարակ, որոշ և յուզիչ հարցի համար: Դա եռանդուն յարձակողական տակտիկա է, վայել այն ազգերին, որոնք արդարև ձգտում են ազատութեան: Եւ մի բան որ ամենից աւելի աչքի է ընկնում, դա Դումայի, համարեա լիակատար համերաշխութիւնն է: Այնտեղ կայ աջակողմեան կուսակցութիւնը, բայց նա, ինչպէս երևում է, առաջ է տարվում փոթորկի մղումով: Աջակողմեան կուսակցութիւնը 1789 թւականին անհամեմատ հզօր էր և ազնւականութեան հրաժարվելը միահամուռ ձայնաւորութիւնից, ֆրանսիական միապետութեան համար համեմատաբար աւելի շուրջ աջակցութիւն էր, քան «հոկտեմբերեանների» անորոշ դիրքը ռուսական բռնապետութեան համար: Միայն Դումայի երկու-երեք անդամները լռութիւն պահպանեցին, երբ ամնիստիայի հարցը առաջադրվեց, իսկ մնացեալ ամբողջ Դուման միահամուռ կերպով ողջունեց նրան: Վերջապէս կայ և մի հանգամանք, որ Դումային տալիս է անկասկած, անպարտելի հզօրութիւն. Նրա քաղաքական և սօցիալական պահանջներ փոխադարձաբար յարում են իրար: Սահմանադիր ռամկավարները և գիւղացիները գործում են իրար հետ համերաշխ: Ռուսաց յեղափոխութեան հակառակորդները յոյս ունէին, որ Դումայի ինտելիգենտները կը թաղվեն սահմանադրական իդէօլօգիայի մէջ, որը ոչ մի ներգործութիւն չէ կարող ունենալ գիւղական աղքատ ազգաբնակութեան վրա: Նրանք յոյս ունէին նոյնպէս, որ գիւղացիները, զբաղված լինելով հողային հարցով, յոյս կը դնեն միայն Թագաւորի բարի կամքի վրա և կը շահվեն ռուտ խոստումներով կամ որ և է խաբուսիկ միջոցներով: Սակայն այդ յոյսը չարդարացաւ: Դէմօկրատները ըմբռնեցին, որ առանց սօցիալական բարեփոխութիւնների նրանք չեն կարող ոչինչ անել: Գիւղացիները հասկացան, որ նրանք չեն կարող ոչինչ ստանալ առանց քաղաքական ազատութեան, առանց վեհապետութիւնը ժողովրդին յանձնելու: Եւ այդ օրից արդէն Դուման մեծ յոյսերի կենդրոն դարձաւ: Միլլիօնաւորներ և միլիօնաւոր գիւղացիներ պահպանում են նրան ամեն տեսակ փորձութիւնների դէմ: Աբսօլիւտիզմի կողմից Դումայի դէմ ուղղված բռնութեան ակտը յեղափոխութիւն կարող է պայթեցնել:

### ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

—

Մօտ օրերս Ստոկհօլմում կայացած ռուսաց սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան համագումարում ընդունված են հետեւեալ որոշումները. 1) ագրարական հարցի առիթով ձայների մեծամասնութեամբ հաւանութիւն է ստացել մունիցիպալիզացիայի նախագիծը. այն փոփոխութեամբ, որ եթէ գիւղացիութիւնը կը պահանջէ գրաւված հողերի բաժանումը, սօցիալ-դէմօկրատները նրան պաշտպանելու են: Վիճաբանութիւնները կենտրոնանում էին մունիցիպալիզացիայի ծրագրի, որ պաշտպանում էին բոլոր փոքրամասնականները, և բաժանման շուրջը, յանձնելով հողերը գիւղացիական կօմիտէներին, որը իր կողմում ունի մի մասը և մեծամասնութիւնը, որին միացրեց իր ձայնը Լենինը, իր նախագիծը յետ վերցնելով քննութիւնից: Ժամանակից մօտենալու հարցը առաջադրված է քննութեան, բայց համագումարի մեծամասնութիւնը հէնց սկզբից հակառակ կարծիք յայտնեց այդ հարցի առիթով որ և է ռեզօլիւցիայի դէմ, և համագումարը անցաւ սօցիալ-դէմօկրատիայի տակտիկայի քննութեանը: Վիճաբանութիւնները առ հասարակ տեղի էին ունենում Դումայի հարցի մասին: Մեծամասնականների մէջ մեծ տարաձայնութիւններ ծագեցին: «Մեծամասնականների» զեկուցանողը խօսեց բօյկօտի տակտիկայի պաշտպանութեան օգտին, նա մատնացոյց արեց այն բանի վրա, որ ներկայ Դուման ոչ թէ պարլամենտ է, այլ նրա նման մի բան, որ այդ պարլամենտը դրված է այնպիսի պայմանների մէջ, որոնց ժամանակ նա բոլորովին զուրկ է կենսունակութիւնից: Այնուհետև նա կանգ առաւ և այն հանգամանքի վրա, որ նախընտրողական ագիտացիայով, որից կուսակցութեան մի մասը առաջարկում է օգտւել, անկարելի էր օգտվել, որովհետև կօնսպիրատիւ պայմանները այդ բանը չէին թոյլատրում, իսկ միւս կողմից մնացեալ բոլոր կուսակցութիւնները հնարաւորութիւն ունէին շարունակ խեղաթիւրելու սօցիալ-դէմօկրատների կարծիքը: «Փոքրամասնականների» տակտիկան, որ կայանում էր Դուման բօյկօտի ենթարկելու մէջ և նախընտրողական ժողովներին մասնակցելու մէջ, քննադատութեան չէ դիմանում: Ի վերջոյ նա նկատեց, որ սօցիալ-դէմօկրատների մասնակցութիւնը ընտրութիւններին կարող էր միայն ձեռնտու լինել ռէակցիայի համար, որովհետև իր պատգամաւորներին, առանց կադետների հետ բլօկ կազմելու, սօցիալ-դէմօկրատիան չէր կարող ընտրել տալ և միայն կը բաժանէր կադետներից այն մասին, որը ձայն էր տալիս ոչ կադետներին, իբրև այդպիսիներին, այլ իբրև օպպօզիցիայի կենտրոն: «Փոքրամասնականների» զեկուցանողը բոլորովին սկզբում կանգ առաւ մի սխալի վրա, որը թոյլ տւեցին իրանց «մեծամասնականները» Դումայի վերաբերմամբ: Սօցիալ-դէմօկրատիան ոչ մի դէպքում չը պէտք է բօյկօտ անէր Դումայի դէմ: Սօցիալ-դէմօկրատական կուսակցութիւնը մասսայական է և այդ պատճառով ձեռքից չը պէտք է բաց թողնէր ոչ մի առիթ, որի միջոցին հնարաւոր է մասսան քաշել, կռւի մէջ մտցնել: Դուման պէտք էր ծառայեցնել այդ նպատակների համար, և այդ պատճառով նրա մէջ մասնակցելը պարտադիր է: Բոլոր ազգային սօցիալ-դէմօկրատական կազմակերպութիւնները բօյկօտի կուսակից էին, բայց որովհետև կուսակցութիւնների միաձուլվելը տեղի ունեցաւ միայն համագումարի վերջում և ազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչները միայն խորհրդակցական ձայնով էին մասնակցում, ուստի համագումարի մեծամասնութիւնը որոշեց Դումային մասնակցել և ընդունեց Կովկասում Պետական Դումայի համար կուսակցական պատգամաւորների ընտրութիւններ կատարելու մասին բանաձևը: Դումայում պարլամենտական ֆրակցիա կազմելու մասին արված առաջարկութիւնը մերժվեց և ընդունվեց մի ուրիշը, որը և նպաստեց պարլամենտական խմբակի կազմվելուն, որի գործողութիւնները գտնվում են կուսակցութեան կենտրոնական կօմիտէտի հսկողութեան ներքոյ: Այդ խմբակի անդամներ կարող են լինել իրանց ուղարկող մասի տեղական սօցիալ-դէմօկրատական կազմակերպութեան հաւանութեամբ միայն ընտրված պատգամաւորները: Զինված ապստամբութեան հարցը այսպէս վճռվեց. նա անխուսափելի է և անհրաժեշտ: Կռիւը վերջ ի վերջոյ զէնքով միայն պէտք է վերջանայ, բայց նա յաղթական կը լինի միայն այն ժամանակ, երբ նրան կը մասնակցի ոչ մենակ պրօլետարիատը, այլ նրա հետ և ամբողջ բուրժուազիան: Իսկ մինչև այն ժամանակ, երբ պայմանները զինված ապստամբութեան համար նպաստաւոր չեն լինիլ, պրօլետարիատը պէտք է աշխատէ իր բոլոր ոյժերով այդպիսի կռիւ առաջացնող փորձերի դէմ:

Պրօֆէսիօնալ միութիւնների վերաբերմամբ համագումարը ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշեց, որ նրանք լինեն անկուսակցական. միևնոյն ժամանակ շեշտվեց, որ սօցիալ-դէմօկրատիան իր բոլոր ոյժերով պէտք է պաշտպանէ անկուսակցական միութիւններին:

Բացի դրանից համագումարը միաձայն դատապարտեց մասնաւոր կայքերի, բանկային և այլ հասարակական հաստատութիւնների միջոցների մասնակի экспроприацииներ: Պետական կայքերի էքսպրօպրիացիայի հարցի վերաբերմամբ համագումարի մի մասը հնարաւոր համարեց այդ բանը, բայց մեծամասնութիւնը այդ առաջարկութիւնն էլ մերժեց: Համագումարը միայն այն որոշումը կայացրեց, որ պետական կայքերից գրաւել հարկաւոր է միայն զէնքերը և ռազմամթերքները:

Բուրժուազական կուսակցութիւնների վերաբերմամբ համագումարը ընդունեց այն բանաձևը, որով առաջարկվում էր ղեկավարվել Ամստերդամի միջազգային սօցիալիստական կօնգրեսի որոշումներով: Այս վերջիններս դրել էին հետեւեալ հարցերը, միանալ ազգային սօցիալ-դէմօկրատական կուսակցութիւնների հետ, և կազմակերպել կուսակցութիւնները: Համագումարը որոշեց միանալ Լեհաստանի և Լիտվայի սօցիալ-դէմօկրատիայի հետ տերրիտօրիական աւտօնօմիայի հիմունքներով: Լեհաստանի, Լիտվայի և Ռուսաստանի ընդհանուր հրէական բանւորական «Բունդ» միութեան վերաբերմամբ ընդունված է միաձուլման առաջարկութիւնը այն պայմանով միայն, որ ազգային աւտօնօմիայի հարցը բաց մնայ:

Կազմակերպչական հարցի հիմք է ընդունել համագումարը դէմօկրատիական կենտրոնացման պրինցիպը. ընտրողական սկզբունքը կուսակցութիւնների կազմակերպութիւնների մէջ կատարվում է վերևից մինչև ներքևները: Համագումարը կայանում է տարեկան մի անգամ, իսկ կուսակցութեան անդամների կէս մասի պահանջով նա կարող է արտակարգ կերպով գումարվել: Համագումարը ընտրում է կենտրոնական կօմիտէտներ և խմբագրութիւն կուսակցութեան կենտրոնական օրգանի համար. այս վերջիններիս անդամները վճռողական ձայնի իրաւունք ունեն կօմիտէտի մէջ:

Ժամանակի սղութեան պատճառով յեղափոխական ինքնավարութեան և բանւորական պատգամաւորների խորհուրդի հարցը ներթականութիւնից դուրս հանվեց:

«Р. В.»

### ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

—

Նամակ Գանձակից, մայիսի 7-ին

Առաջին զոհը փոքր մարմնով, թոյլ կազմուածքով, Թիֆլիսեցի մանկահասակ օրիորդ է 11—12 տարեկան հասակով: Մօտաւորապէս մի ամիս առաջ Թիֆլիսի փողոցներից մէկում օրիորդին պատահում է ինքն իրան իշխանուհի ձևացնող մի վրացուհի ու օրիորդին առաջարկում է, թէ չի՞ ցանկանայ նա արդեօք բաւարար ռոճիկով և ձեռնտու պայմաններով մտնել իր ձեռագործութեան արհեստանոցը: Իշխանուհու խոստումները այնքան շլացնող են լինում, որ օրիորդն անմիջապէս պատրաստակամութիւն է յայտնում և համաձայնվում է իշխանուհու հետ միասին գնալու արհեստանոցը:

Նրան տանում են տուն, և օրիորդին ասում են, որ արհեստանոցը գտնվում է Գանձակում, նրան իրանց հետ կը տանեն Գանձակ, բայց որպէս զի օրիորդի ազգականները այդ մտադրութեանը խոչընդոտ չը լինեն, պէտք է իրանց մտադրութիւնը օրիորդի ազգականներից գաղտնի մնայ: Օրիորդը փորձում է իր թոյլ ուժերով դիմադրել, դուրս թռչել... բայց վարպետ կնիկը և իշխանուհին նրան կարողանում են հաշտեցնել գնալու մտքին: Օրիորդին բերում են Գանձակ ու յանձնում Թուրքաց թաղում գտնվող մի գաղտնի թուրք անառականոց պահող Թուրքի: Մանկահասակ օրիորդն այստեղ Թուրք հիւրերի կողմից անպատմելի տանջանքներ է կրում, և դա շարունակվում է այնքան ժամանակ, մինչև, որ վրայի հիւանդութիւնը սկսում է կամաց թուլանալ և վերջապէս օրիորդին աջողվում է այնտեղից դուրս թռչել, որովհետև բոլորովին պատահմամբ նրան հանդիպում է միակ օրինակելի պրիստաւ Տուրկէվ: Օրիորդը պատմում է իր գլխի եկածը նրան. պրիստաւը անմեղ զոհին բերում յանձնում է առաջնորդական փոխանորդին, և վերջինիս պահանջմամբ կատարվում է պաշտօնական քննութիւն, կազմվում է օրինապահանջ արձանագրութիւն, ու երէկ մի հայի հետ օրիորդին ճանապարհում են Թիֆլիս իր ազգականների մօտ:

Երկրորդ զոհը մի 15—16 տարեկան յաղթանդամ, ամուր կազմուածքով, սիրուն գծագրութեամբ, Թիւրքաց Հայաստանի արտասանութեամբ խօսող, վանեցի Տէր-Անդրէասեան ազգանունով մի օրիորդ է: Օրիորդի ասելով, իր ծնողները իրան Վանից բերել են մի տարեկան ժամանակ, և նրանք ապրելիս են եղել Թիֆլիսում: Նա զրկվելով մօրից, եղբայրներից, մնացել է ծերունու մօր խնամքին, որի աչքերը ծերութիւնից կուրացել են:

Նա սովորելիս է լինում Թիֆլիսի մի ուսումնարանում, բայց ուսման վարձը չը վճարելու պատճառով նրան հեռացնում են դպրոցից: Վեց ամիս առաջ նրան պատահում է մի հայ կին, որը իրան ձևացնում է բագուեցի յայտնի հարուստ օրիորդի հօրը առաջարկում է տալ աղջկան «իրան հոգեորդի» խոստանալով նրան աչքի լոյսի նման պահել:

Ծերունի դիւրահաւատ հայրը, շլանալով բուրժուհու առատ խոստումներից, առանց երկար բարակ մտածելու, իր աղջկայ ապագայ բաղդը յանձնում է Սառայ Մուսաէլեանի կամքին: Օրիորդին տանում են Բաքու, ուր ինչպէս «խնամատար» Սառան, նոյնպէս միբախօս իր սիրեկան հայը, առաջին երեք ամիսը նրան պահում են որդու նման:

Բայց երեք ամսից յետոյ Սառան իր կօշկակար սիրուհու հետ քաղաքի հոտ ընկած մասում վարձում են մի գարեջրատուն, ուր իրան վիճակակից մի ուրիշ հայ օրիորդի հետ կատարում են գարեջրատան հիւրերի պահանջները... Ընկերուհին յօժարակամ կատարելիս է լինում հիւրերի պահանջները, բայց ինքն խոյս տալով, երկար ժամանակ դիմադրել է Սառայի և սիրեկանի առաջարկութիւններին... Բայց մի օր կերակրի մէջ ինքն էլ չը գիտէ ինչ են խառնում և ինքն ընկնում է անզգայ դրութեան մէջ, և զարթնելուց յետոյ է իմանում իրան հետ պատահածը... Միանգամայն անտանելի լինելով օրիորդի կեանքը, նա հնարներ է մտածում մի կերպ փախչելու և նրան աջողվում է լուսամուտով փախուստ տալ, բայց նրա բաղդից փախուստն անմիջապէս իմացվում է, Սառայի սիրեկանը դիմում է ոստիկանի օգնութեանը, զրպարտում օրիորդին զանազան գողութեան մէջ, և նրան ուժով վերադարձնում են գարեջրատուն, դարձեալ առաջվայ կեանքը շարունակելու համար: Վերջին երեք ամիսը նա կատարում է գարեջրատանը հիւրերի պահանջները...

Երեք օր առաջ օրիորդին աջողվում է փախչել ու պատսպարվել մի հայ ընտանիքում, որտեղից նրան անփորձ բերում են կայարան և ճանապարհում Թիֆլիս: Բայց նրա բաղդից ճանապարհի տոմսակը կորչում է, մնում է կօնդուկտորի խնամքին յանձնված: Երբ նրա գնացքը հասնում է Եւլախ, երևոյթին կօնդուկտորի և Թուրք պրիստաւի փոխադարձ համաձայնութեամբ, իմացվում է «որս»-ի մէջ լինելը, նրան ցած են իջեցնում վագօնից ու յանձնում Թուրք պրիստաւին բոլորովին հակառակ օրիորդի և շրջապատող հայերի կամքին, որը տանում է նրան իր բնակարանը: Լուրը հասնում է այդտեղի պաշտօններում գտնվող հայ զինւորներին. վերջինները միջնորդութեամբ և ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ, պրիստաւի տնից խլում են օրիորդին և հետեւեալ օրը Գանձակ ճանապարհում: Երբ գնացքը կանգնում է Գանձակում, Եւլախից նոյն գնացքով եկող Թուրքերը և գնացքից ցած են իջնում ու կայարանում օրիորդին շրջապատում, փախցնելու մտադրութեամբ: Նրանցից մէկը մինչև անգամ գրկում է օրիորդին, բայց վերջինիս ձայնի վրա է հասնում մի հայ ու Թուրքին ապտակում և օրիորդին ձեռքից խլում:

«Գիւրջի է, հայ չէ»—ասում են Թուրքերը, նրա գծագրութիւնը վրացու է նման: Օրիորդին շրջապատում են պատահմամբ այդտեղ գտնվող մի խումբ հայեր ու օրիորդին տանում են կայարանի հիւրանոցը: Ճանապարհին Թուրքերը փորձ են անում ձեռքից խլելու, բայց չէ աջողվում. հիւրանոցից փոխադրում են մի հայի ընտանիք, որի դէպքի մասին յայտնում է փոխանորդին, վերջինիս կարգադրութեամբ, մարդիկ են ուղարկում կայարան և նրան բերում քաղաք:

Աւ. Սահակեան

### ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԴՈՒՄԱՅՈՒՄ

—

Յիշում են ընթերցողները, որ երբ Պետական Դումայի պատգամաւորական ընտրութիւնների մասին տեղեկութիւններ էին հաղորդում հեռագիրները, նրանց մէջ յաճախ կարդում էինք. այսինչ տեղը այսչափ թւով «վայրենիներ» ընտրվեցին: Այդ անունով կոչվում էին այն պատգամաւորները, որոնք գոյութիւն ունեցող և ոչ մի կուսակցութեան չէին պատկանում: Եւ որովհետև այդ վայրենիները համարեա թէ բացառապէս գիւղացիական պատգամաւորներն էին, ուստի կառավարութիւնը մեծ յոյս ունէր, թէ նրանք Պետական Դումայում, եթէ ոչ ամբողջապէս, գոնէ մեծ մասամբ իր կողմը կանգնեն: Եւ ի հարկէ, չափազանց մեծ եղաւ կառավարութեան հիասթափութիւնը, երբ այդ «գռեհիկ» գիւղացիների «անհամոզում», «վայրենի» պատգամաւորները, որոնք իրանց քանակով մի պատկառելի թիւ են կազմում—մօտ 130 հոգի, բոլորն էլ Տաւրիկեան պալատում ձախ կողմի տեղեր բռնեցին և միացան օպպօզիցիային:

Այդ դեռ բաւական չէ՝ ի զարմանս շատերի «վայրենիները» օպպօզիցիային կողմը անցնելով հանդերձ, բոլորովին չը միացան ձախակողմեան կուսակցութիւններից և ոչ մէկին, այլ իրանցից կազմեցին մի բոլորովին առանձին պարլամենտական գիւղացիական խումբ և իրանց համար յատուկ գործունէութեան մի ծրագիր մշակեցին:

Պէտք է նկատել, որ գիւղացի կամ գիւղացիութիւն ասելով մի ընդհանուր դասակարգ չը պէտք է հասկանալ, որովհետև մի և նոյն դասակարգին միշտ պատկանում են այն մարդիկ, որոնք մի և նոյն տնտեսական ու քաղաքական շահերով են կապված միմեանց հետ, որոնք սօցիալական ու հասարակական կազմի մի և նոյն կատեգորիային են պատկանում: Իսկ գիւղացիութիւնը ընդհանուր առմամբ մի և նոյն կատեգորիային պատկանող մի զանգուած չէ՝, բոլոր գիւղացիներն էլ մի և նոյն տնտեսական ու քաղաքական շահեր ունեցողներ չեն: Գիւղացիների մէջ կան և մեծ հողատէրեր, որոնք վարձու բանւորներով են մշակում իրանց հողերը, կան և բոլորովին հող չունեցողներ, որոնք իրանց ձեռքի աշխատանքով են միայն ապրում և կազմում են գիւղական պրօլետարիատը: Նրանց մէջ կան և հարուստ վաշխառուներ, և չափազանց փոքր հողաբաժին ունեցող կէս պրօլետարներ: Հէնց այդ տեսակէտով անհասկանալի է դառնում, թէ ինչպէս բոլոր գիւղացիական պատգամաւորները կարողացել են միանալ և մի առանձին պարլամենտական խումբ կազմել: Ի՞նչպիսի շահեր, ինչ ծրագիր կարող է դրանց բոլորին միմեանց կապել և ո՞րչափ երկար կարող է տեւել դրանց միութիւնը:

Գիւղացի պատգամաւորների այդ միութիւնը, նրանց այդպէս առանձնանալը և օպպօզիցիայի միւս կուսակցութիւններից, օրինակ՝ կադետների կամ նոյնիսկ սօց.-դէմօկրատների հետ չը միանալը իսկոյն հասկանալի է դառնում, երբ մենք մտաբերում ենք, որ Ռուսաստանում, բացի տնտեսական ու քաղաքական շահերով միմեանցից տարբերվող ու բաժանվող դասակարգային բաժանումից մինչև օրս գոյութիւն ունի և ժողովուրդի դասական (сословное) բաժանումը: Միջնադարեան աւատական ժամանակներից մնացած այդ խայտառակ ու մարդկային ցեղը ստորացնող սիստեմը, այդ ամօթալի հասկացողութիւնը, որի հիման վրա մարդիկ բաժանվում են երկու տեսակ ցեղի—ազնիւ և ստոր ցեղ, մինչև օրս էլ պահպանել է իր ամբողջ ոյժը: Եւ այդ բանից, ի հարկէ, ամենից աւելի տուժել և տուժում են գիւղացիները, որովհետև ազնւական բիւրօկրատիայի հասկացողութեամբ գիւղացիները ամենաստոր ցեղն են համարվում, որոնց հետ ամեն տեղ և ամեն հանգամանքներում կարելի է և պէտք է վարվել ոչ այնպէս, ինչպէս միւս ցեղերի հետ են վարվում: Աւելին կասենք, ազնւականութեան հասկացողութեամբ գիւղացին նոյնիսկ մարդ էլ չէ համարվում, նրա համար նոյնիսկ մի յատուկ անուն էլ են ստեղծել՝ «մուժիկ»: Թող մարդը շատ հարուստ լինի, թող նա մեծ հողեր, մեծ դրամ ունենայ, բայց բաւական է, որ նա «մուժիկ» է, ուրեմն կարելի է նրա հետ վարվել իբրև մի ստոր արարածի հետ. շատ անգամ աւելի վատ, քան ազնւականի ախոռում կապած ձիերի հետ:

Ահա հէնց այդ հանգամանքը, այդ գիւղացու ստորացումը, իր շարունակաբար կրած զրկանքներն ու տառապանքներն են, որ այսօր ստիպում են թէ բուրժուա և թէ պրօլետար

գիւղացուն, թէ շահագործողին և թէ շահագործւողին միանալ, մի առանձին պարլամենտական խումբ կազմել և իրանց գործունէութեան համար մի բոլորովին առանձին ճանապարհ գծել, ծրագիր կազմել: Եւ նրանց ծրագրին պահանջներից ամենագլխաւորը դասերի վերացումն է (уничтоженіе сословій): Ճիշդ է, ձախակողմեան բոլոր կուսակցութիւնների էլ այդ նոյն պահանջը ունեն իրանց ծրագրներում, բայց և այնպէս դարերով տանջված ու հալածված գիւղացին շատ էլ մեծ վստահութիւն չունի դէպի աղաներ (баринъ), մանաւանդ դէպի ազնուական աղաները: «Դուք շատ լաւ էք խօսում, շատ սիրուն բաներ էք պահանջում,—ասում է նա աղաներին,—բայց և այնպէս մենք և դուք դեռ տարբեր ցեղի արարածներ ենք, ուստի և աւելի լաւ կը լինի, որ առայժմ մենք միմիանց չը խառնւինք և տարբեր ճանապարհներով ընթանանք: Իսկ երբ մեր և ձեր մէջ եղած ցեղային տարբերութիւնները կը վերանան, երբ մենք էլ վերջնապէս կարժանանանք «մարդ» և «քաղաքացի» անուններով կոչվելու և միևնոյն քաղաքացիական իրաւունքները վայելելու, այն ժամանակ մենք կարող ենք միանալ և ձեզ հետ միևնոյն ճանապարհով գնալ...»:

Իսկապէս, հէնց այդպէս էլ կը լինի: Երբ դասային տարբերութիւնը վերացվի, պարլամենտական գիւղացիական առանձին խումբն էլ իր նշանակութիւնը կը կորցնի, սակայն երբէք չէ կարելի ասել, թէ ներկայումս այդ խմբի մէջ եղած բոլոր պատգամաւորներն էլ Դումայում գոյութիւն ունեցող միևնոյն կուսակցութեան հետ կը միանան: Ինչպէս այս յօդուածի սկզբում ասացինք, ամեն մի քաղաքական կուսակցութիւն անպատճառ մի որ և է սօցիալական դասակարգի տնտեսական ու քաղաքական շահերի արտայայտողն ու ներկայացողն է լինում: Եւ որովհետև բոլոր գիւղացիները ընդհանուր տնտեսական ու քաղաքական շահերով կապված մի դանդուած չեն ներկայացնում, այլ ընդհակառակը՝ նրանք էլ, ինչպէս և միւս հասարակական խաւերը, իրանց տնտեսական ու քաղաքական շահերով զանազան և միմեանց հակառակ դասակարգերի են բաժանվում, ուստի և մեծ հողատէր գիւղացին, փոքր հողատէր գիւղացին և բոլորովին հողազուրկ պրօլետար գիւղացին միմեանցից կը բաժանվեն և դրանցից իւրաքանչիւրը կը մտնի իր շահերին ու ձգտումներին համապատասխանող կուսակցութեան մէջ:

Այդպէս կը լինի գիւղացիական խմբի լուծումը Դումայում, և այդպէս նրանք կը դասաւորվեն միւս քաղաքական կուսակցութիւնների մէջ, երբ գիւղացիութիւնը վերջնապէս կը դադարի մի առանձին, քաղաքացիական ու մարդկային իրաւունքներից զուրկ դաս կազմել և մի ինչ որ ստոր ցեղի պատկանող արարած համարվել:

Խ.—Ազատ

## ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՒՈՐ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ ԲԱՆՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Աշխատաւոր խմբակը՝ անհրաժեշտ պահանջ համարելով բանւորական հարցի շուտափոյթ լուծումը այն հիմունքներով, որը արդէն բաւականաչափ որոշ կերպով արտայայտել են բանւոր դասակարգը և այդ խմբակի մէջ մտնող բանւորական պատգամաւորները, ձեւակերպել է իր պահանջները.

1) Մաքսիմալ 8 ժամվայ բանւորական օր վարձու աշխատանքի՝ բոլոր ճիւղերի համար, առանց պակասեցնելու վարձագինը և սահմանել 42 ժամվայ անընդհատ պարտադիր հանգստութիւն իւրաքանչիւր շաբաթվայ մէջ:

2) Կանանց և մանկահասակների աշխատանքի վերահսկողութիւն:

3) Աւելորդ ժամերի աշխատանքը բոլորովին վերացնել:

4) Արգելել գիշերային աշխատանքը, բացի այն արդիւնաբերութիւններից, որտեղ տեխնիքական պայմանների շնորհիւ այդ բանը հնարաւոր չի լինի:

5) Բանւորների ապահովագրութիւն պետութեան կողմից, արդիւնաբերողների հաշւով:

6) Քրէական պատասխանատւութեան ենթարկել բանւոր վարձողներին աշխատանքի պահպանութեան վերաբերեալ օրէնքները խախտելու համար:

7) Գործարանական վերահսկողութիւնը ընդարձակ բարեփոխութեան ենթարկել և տարածել նրան վարձու աշխատանքի բոլոր տեսակների վրա, սահմանելով պարտադիր վերահսկումն տեղական բանւորական կազմակերպութիւնների կողմից:

8) Պարտադիր ձրի բժշկական օգնութիւն բանւորների համար և բանւորական կեանքի առողջապահական պայմանների վրա ընդարձակ վերահսկողութիւն նշանակել վարչութեան կողմից:

9) Հիմնել խաղաղարար մասնաժողովներ, բանւորների և գործատէրերի հաւասարաթիւ ներկայացուցիչներից կազմված, երկու կողմի մէջ ծագած թիւրիմացութիւնները քննելու համար:

10) Ժողովրդական մասսաների համար սահմանել դպրոցից դուրս պարտադիր կրթութիւն և գրադարաններ, ընթերցարաններ հիմնել գործարանների ու ֆաբրիկների կից:

11) Ոչնչացնել տուգանքները, առհիկից փող պահելը, և խուզարկութիւններ կատարելը:

Աշխատաւոր խմբակը կարծում է, որ այդ հարցերի լուծումը, ինչպէս և հողայինը, կարող է միայն իրագործել ընդհանուր ընտրողական իրաւունքի հիման վրա ընտրված ժողովրդական ներկայացուցիչների ժողովը, Ռուսաստանում, ամեն խոսման և բոլոր քաղաքացիական ազատութիւնները իրագործելուց յետոյ: Իսկ առ այժմ խմբակը անհրաժեշտ է համարում միայն սկիզբ դնել բանւորական հարցի լուծմանը, որի համար անհրաժեշտ է գտնում անյապաղ կազմել տեղական բանւորական պատգամաւորների խորհուրդներ, ընտրված ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատւութեամբ, որոնք պէտք է յանձն առնեն բանւորական հարցի մանրակրկիտ մշակումը և նախապատրաստեն կեանքի մէջ գործնական դրքնելու: Բանւորական պատգամաւորների այդ խորհուրդները կը պատրաստեն իրանց նիւթերը վերջնական լուծման համար և ցոյց կը տան այն ցանկալի պայմանները, ձևերը և միջոցները, որոնց հիման վրա բանւորական հարցը պէտք է վերջնականապէս լուծվի ապագայ ժողովրդական ներկայացուցիչների ժողովում:

Բանւորական հարցի վերաբերեալ ծրագիրների մշակումը, ի նկատի ունենալով բանւորներին վերապահված լիակատար ազատութիւնը անմիջապէս իրանց վերաբերող հարցերը վճռելու համար, յանձնվել էր ամբողջապէս Պետական Դումայի բանւորներից ընտրված անդամներին:

Ջեռնհաս անձանց մասնակցութեամբ մի քանի խորհրդակցութիւն ունենալուց յետոյ, ծրագրի նախագիծը մշակվեց և ներկայումս յանձնված է «Աշխատաւոր խմբակի» մասնաժողովի քննութեանը:

## ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՒ ՄԷՋ

Զ. ծխական խնդիրներ.—Մեր եկեղեցու մէջ այս խնդրի շուրջն սպասվող բարենորոգութիւնները կարելի է ամփոփել հետեւեալ խօսքերի մէջ.—Հայ եկեղեցին պէտք է հասցնել իր նախկին պարզութեանը:

Շնորհակալութիւն մեր եկեղեցու ս. հայրերին, որ ժամանակի ոգու և պահանջի համաձայն աշխատել են խորհրդաւոր ձոխ անել մեր ծխակատարութիւնն ու ծիսարանը: Նրանք խելացի են եղել իր ժամանակի համար. նրանք թեւ թէ ընդառաջ են գնացել դարի հասկացողութեանը: Մենք նոյն իմաստութեամբ վարված կը լինենք, նոյնքան հեռատեսական, խոհեմ, շրջահայեաց, որքան և մեր հայրերը, եթէ ժամանակի ոգու հասկացողութեան և պահանջների համեմատ շարժվենք և գործենք: Ինչպէս այն ժամանակին իր առաջադրած հասկացողութիւնների համաձայն ծեսեր էր սահմանում եկեղեցու մէջ, այնպէս և նոյնքան իրաւունք ունի ներկայ ժամանակը իր հասկացողութեան և պահանջների տրամադրութեամբ՝ փոխել հին կարգերը, ստեղծել նորը, ձոխացնել կամ պարզել՝ հասցնելով իր նախնական դրութեանը: Այժմ ներկայի իմաստութիւնն այդ է պահանջում: Միթէ չը պէտք է լինենք նոյնքան իմաստուն, որքան եղել են մեր պապերը:

Մեր եկեղեցին, ինչպէս և քրիստոնէական բոլոր եկեղեցիներն իրանց նախկին պարզութեան մէջ վեհ են եղել ու մաքուր. Նրանց խորթ են եղել այն բազմազան ծեսերն ու սովորութիւնները, որ յետագայ դարերումն են սահմանվել և որոնք մի աւելորդ և աւելորդ բեռ են Քրիստոսի հիմնած մաքուր և պարզ եկեղեցու համար: Նախնական եկեղեցին, այո, անծանօթ է եղել այդ երկար ու բարակ աղօթքներին, շարականներին և այլն:

Վերցնենք հէնց մկրտութիւնը: Այդ խորհուրդն իր նախնական պարզութեամբ սքանչելի է: Յիսուսի պատուէրով, ինչպէս աւետարանն է ասում, աշակերտները պէտք է հեթանոսներին մկրտէին յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Աշակերտներն այդ պատուէրի հիմամբ դնում էին իրանց ձեռքը մկրտվողի գլխին և մկրտում Հօր, Որդու և ս. Հոգու անունով. նոյնը կատարում էին և սկզբի դարերի հոգևոր հայրերը՝ այդպէս պարզ և մաքուր, առանց երկարաբանութեամբ: Այդպէս մկրտելու համար մի քանի րօպէ է հարկաւոր. Մինչդեռ միջին դարերի յաւելած սովորութիւններով ու ծեսերով, ներկայիս մկրտութիւնը՝ եթէ մկրտող քահանան բարեխղճութեամբ ծիսարանի մէջ բոլոր գրվածները կատարէ՝ տեւում է մօտ մի ժամ: Եւ ինչ՞ու այդ բոլորը. ... է հարկաւոր. միթէ զանազան, թէկուզ սուրբ, վարդապետների շարադրած աղօթքները, շարականները, և դրանց կից սաղմոսներն ու գրքերն աւելի սուրբ և լաւ են անում մկրտութիւնը, քան թէ եկեղեցու հիմնադրի համառօտ պատուէրը: Միթէ կարիք կայ ասելու, որ եկեղեցու համար բարձր և սուրբ պէտք է լինի Յիսուսի պատուէրը, քան վարդապետների, խօսքն ու գրած կարգերը, կարգեր, որոնք ոչ մի եկեղեցական ժողովից չեն վաւերացված:

Եկեղեցին ոչինչ չի կորցնի, եթէ մկրտութիւնը կատարվի պարզ, քրիստոնէութեան առաջին դարում գործադրվող եղանակով:

Հաղորդութիւն տալու մասին հարկ ենք համարում ասել. նախ, պիտի վերացնել երեխաներին հաղորդելու սովորութիւնը: Երկրորդ, հաղորդվել սկսեն այն հասակից, երբ կարող են գիտակցել այդ խորհրդին դիմելու կարեւորութեանը. յամենայն դէպս այդ հասակը 16-ից ցած չը պիտի լինի: Երկրորդ. պիտի վերացնել հաղորդելու ներկայ եղանակը, երբ հաղորդող քահանան իր մատները յաջորդաբար տանում է հարիւրաւոր հաղորդվողների բերանը: Երեւի դժբախտութիւն է, որ մենք այնքան սուրբ չենք, որ մեր հաւատը մեզ փրկէ վարակումից: Հաղորդութեան սրբութիւնը ոչինչ չի կորցնի, եթէ մենք խուսափենք վարակվելու հնարաւորութիւնից: Գիտեմ, սրբակրօնները կը զայրանան այս խորհրդածութիւններից, բայց ինչ անել. անհնար է այլ կերպ վարվել, այլ և անհնար է անուշադիր թողնել ներկայիս ծխակատարութիւնների երբեմն մեծ թերութիւնները: Ժամանակ է, որ խօսենք դրանց մասին, ժամանակ է, որ հէնց իրանք բողոքեն աւելորդապաշտութիւնների դէմ, եկեղեցին մաքրելու, սկզբնական վեհութեան ու պարզութեանը հասցնելու մասին:

Հապա խոստովանութեան ներկայ ոգեղ ու անբովանդակ ձե՞ւը. դա ուղղակի վրդովեցուցիչ է: Եթէ հաղորդվելու համար հարկաւոր է խոստովանութիւն, այդ խոստովանութիւնը պիտի լինի իրօք խոստովանութիւն. այսինքն, իւրաքանչիւր հաղորդվող պիտի առանձին խոստովանվի, հակառակ դէպքում խոստովանութիւնը կորցնում է իր միտքը, երբ յանկարծ 15—20—30 հոգի մանր ու խոշոր չոքում են քահանայի առաջ ու մի երկու րօպէից յետոյ վեր կենում հաղորդվում: Եւ այդ գործողութիւնը կատարվում է երբեմն այնպէս ոգեղ, խառն ի խուռն, աղմուկ, աղաղակով, որ տեսնողը չէ կարող առանց զայրոյթի անցնել: Եւ դա ինչ խոստովանութիւն է. դա ծաղր է, մեռած, անհոգի ձեւականութիւն. կամ պէտք է խոստովանութիւնը լինի կարգին, լուռ, հանդարտ, առանձին, և կամ թէ չէ, պէտք է ներկայիս այդ անպատուաբեր և հաղորդութեան սրբութեանն՝ անվայել խոստովանութեան ձեւը բոլորովին վերացնել: Աւելի լաւ է հանդարտ, երկիւղածութեամբ մօտենան ս. հաղորդութեանը, հաղորդվին ու հեռանան, քան թէ անեն այնպէս, ինչպէս այժմ շատ տեղերումն են անում: Անկարգ և ամօթաբեր ձեւով խոստովանվելն ու հաղորդվելը ամօթ է ու մեղք. նա ոչ ոքի հոգին չի փրկի: Այո, պէտք է վերջ տալ այդ ոգեղ ձեւերին, դա ձըգում է և եկեղեցու և սրբութեան վարկը:

Մի բան, որ մեր եկեղեցու մէջ ամենաողբալի վիճակի մէջ է, դա եկեղեցական երգեցողութիւնն է: Սրա մասին այնքան է գրվել, որ նոյն իսկ աւելորդ է կանգ առնել: Մենք միայն կասենք. աւելի լաւ է չերգեն այնպէս ոգեղ, վատ, աններդաշնակ, այո, բոլորովին չերգեն, քան թէ երգեն, և զայրոյթ ու վրդովմունք առաջ բերեն աղօթողների մէջ. նա, որ գնացել է աղօթելու և մխիթարութիւն գտնելու, մեր երգեցողութիւնը լսելուց յետոյ չէ կարող ոչ աղօթել և ոչ մխիթարվել: Աւելի լաւ է երբեմն լաւ՝ բայց քիչ, մի երկու տուն, քան թէ վատ և այն էլ ժամերով: Որքան վատ է ոգեղ և աններդաշնակ երգեցողութեան ազդեցութիւնը աղօթողների վրա, նոյնքան սքանչելի է, երբ երգը ներդաշնակ է և կանոնաւոր: Թողնենք այս, անցնենք մեր ժամասացութեանը, բայց այդ մասին եկող անգամ:

Արս. վարդապետ

## ՄԱՔՐԵՑԷՔ ԱՍՊԱՐԷԶԸ

III

Գէորգ կաթողիկոսի օրով մեր եկեղեցական ծխական ուսումնարանները, չը նայելով ժամանակի պահպանողական ոգուն, աւելի ազատ էին կղերական իշխանութիւնից: Ուսումնարանների գլուխ գտնվում էր աշխարհականների ձեռքին և թեմական տեսուչներ էին աշխարհական մարդիկ:—Յիշեցէք Գէորգ Բարխուդարեանին, Սարգիս Բէկնազարեանին, Ղազարոս Աղայեանցին, Յովհաննէս Տէր-Գրիգորեանցին են: Դրանք թէև մի մի անվերարկու հոգևորականներ են, բայց 70-ական թուականների մեր հոգևոր երարխիայի րէժիմի տակ համարվում էին մի-մի նորածին աստղեր և մեծ յեղափոխութիւն էին գցում դըպրոցների մէջ՝ խալիֆայական փալախկաններից հիմնելով կանոնաւոր դպրոցներ և ժամագրքից ու Նարեկից անցնելով «Մայրենի լեզուի» ուսուցմանը...:

Անցան այն երջանիկ ժամանակները: Դըպրոցը նոր, սահմանափակ կանոններ բերեց մեզ համար: Վարիչները զուտ հոգևորականներ պէտք է լինէին.—Թեմական տեսուչը հոգևորական, դպրոցի հոգաբարձութեան նախագահը հոգևորական, հոգաբարձուն՝ երեցփոխ, որ մի և նոյն է, թէ հոգևորական, նըրակողութիւնը հոգևոր, դասընթացը զուտ կրօնական: Այդ հոգով, այդ ուղղութեամբ էլ կրթվում էին մանուկները և աւարտման վկայական ստանալո՛ւ իրանցից ոչինչ չէին ներկայացնում հասարակութեան առաջ:

Դրանից աւելի թշուառ գոյնը տեսանք.—փակված դպրոցներ, ցիրուցան մանուկ սերունդ, անգրագիտութիւն...:

Եկաւ նոր ժամանակը և նոր հովեր փչեց: Մարդկային ազատագրութեան աշխարհային արեգակը մի ցնցում էլ վեր անմխիթար, մըռայլոտ դէմքը լուսաւորեց: Տուին մեզ կառավարելու մեր դպրոցները, հին դպրոցները աւելի լայն իրաւունքներով, աւելի լայն ծրագրով, քան հնոտիհնոտ պոչաւոր, խղճուկ դպրոցները իրանց հոգևոր և հոգևորական կառավարութեամբ:

Հոգևոր կառավարութիւնը կամեցաւ «հին իշխանութիւնը» անսասան պահել և պահեց: Գոնէ մեր Ղարաբաղը արժանաւոր հոգևորականների բացակայութիւնից չարաչար տանջում երկիրը, իր նախավերջին դպրոցական րէժիմի ամենաչքնաղ հետևողն ու հպատակը դարձաւ.—Մեր թեմական դպրոցը ստացաւ մի վարդապետ տեսուչ, իսկ ծխական ուսումնարանները մի այլ վարդապետ թեմական տեսուչ նրա եղբայրը: Սրդինքը.—Անհերեք է...

Թեմական տեսուչն աւելի պատուաւէր գտնվեց կէս ճանապարհից հեռանալ, իսկ թեմական դպրոցին ուղեց մի քանի սկանդալներ սարքել յետոյ: Նրան երեւս կանգնեց աշակերտութիւնը, ուսուցչութիւնը, ժողովուրդը: Բայց նա իր մագինները կարծես չի ուզում հանել նրա կրծքից, իսկ միւս ձեռքով խարբխում է նորանոր պատուանդաններ, սահելու դէպքում իր ոտքը նրանց վրա ամրացնելու— դա թեմական տեսչութիւնն է, ծխական ուսումնարանների կառավարութեան, ղեկավարութեան, ընթացաւութեան բազմահոգ և ամենակարեւոր գործը:

Ո՞ր աստիճան հիւրասէր և հիւրընկալ կը գտնվեն հոգաբարձութիւնները վարդապետ տեսչի վերաբերմամբ՝ չը գիտենք: Թող բարի վայելում լինի նրանց համար, որոնք կոչված են դաւաճանելու հասարակութիւնից իրանց վրա դրված սրբազան պարտականութիւնը, իսկ հասարակութեան համար մի դրդիչ, սթափեցնող ազդարար, զգալու համար, որ ժամանակ է մաքրել ասպարէզը մեռելութիւն առաջացնող տարրերից և տալ նրան գիտակից, գործունեայ ուժեր նորագոյն պահանջների բոլոր յարմարութիւններով:

Տ.

## ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՄԱՆՐ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ

Ժողովը ապրիլի 30-ին էր՝ կիրակի: Ժողովի նիւթն էր.—1) Երկու ամսվայ հաշիւը և 2) Մի քանի լրացուցիչ ընտրութիւններ:

Վարչութեան կարդացած հաշւից երեւաց, որ ընկերութիւնը բացման օրից ունեցել է 60 անդամ, այսօր՝ 140, անդամավճար մտել է 4753 ր., դուրս է եկել՝ 40 ր., տոկոսներ մտել են 194 ր. 4 կ., աւանդներ՝ 3388 ր. 72 կ., դուրս է եկել՝ 999 ր. 30 կ.: Անցողական դրամներ՝ 745 ր., դուրս է գնացել 695 ր., վարչութեան ծախս եղել է 180 ր. 4 կ., ընդհանուր մուտքը եղել է 9080 ր. 76 կ. ելքը՝ 6949 ր. 30 կ.: Բոլոր ծախսերը հանելուց յետոյ ընկերութիւնը զուտ օգուտ է ունեցել 14 ր. մի քանի կոպէկ:

Այս համառօտ հաշիւը կարդալուց յետոյ վարչութեան նախագահ երիտասարդ փաստաբան Տ. Ղազարեանը ասաց հետեւեալը. «Մեր ընկերութիւնը նմանում է մի նոր տնկած ծառի, որ մեծ խնամք և հոգս էր պահանջում, որ նա մի քիչ արմատներ ձգի և հաստատվի: Ի նկատի առնելով չարակամ և խառնակիչ թայֆաների գաւերը՝ մենք ամեն ճիգ թափեցինք հեռու պահել մեր գործը նրանցից և դնել իրական ճանապարհի վրա: Այսօր ես յանձնում եմ ձեզ նորահաստատ «բանկը» և խնդրում եմ նրա հետ նաև ընդունէք իմ հրաժարականը, որովհետև, ինչպէս նկատում եմ, ստոր թայֆայականութիւնը հէր գլուխ է ուզում բարձրացնել»:

Այս բանից յետոյ սկսեց «փոթորիկը» և երեւան եկան անձնական հաշիւներն ու կռիւները: Բացվեցին այնպիսի խայտառակութիւններ, որ եթէ գրիչը կարող է գրել, ազնիւ մարդը չէ կարող կարդալ:

Ժողովը վճռեց հեռացնել գործից վարչութեան նախկին նախագահ կ. Խօջաէյնաթին, ընդունել միւս երկու անդամների հրաժարականները և նրանց տեղ ընտրել նորերը, որ և ընտրվեցին՝ մի գիւղացի Ալի-Ղամարլուից և մի վաճառական՝ Իգդիրից: Այդ վաճառականը Կանալեանցն է, թէև մի խումբ թայֆայականներ խօսք էին տուել ոչ մի «Կանալեանցի» չը թողնել «բանկը»:

Ժողովը թէև չընդունեց վարչութեան նախագահի հրաժարականը, բայց նա՝ իր հրաժարականը յետ չէ վերցնում. միւս կողմից էլ վարչութիւնը մնացել է առանց գանձապահի, որովհետև հին գանձապահը արդէն յանձնել է գործերը, իսկ նորը դեռ չէ սկսել իր գործը. մի խօսքով՝ կարծես «խառնակիչների» ցանկութիւնը կատարվում է և նորահաստատ բանկը սկսում է քայքայվել:

Ազնիւ և գործին անկեղծօրէն կպած մարդիկ պահանջում են, որ նորընտիր անդամները վարչութիւն գնան և գործ կատարեն, և ոչ թէ «անուն» համար ընտրվել, յետոյ դուրս չը գալ իրանց տանից ու խանութից: Այս հանգամանքները ի նկատի ունենալով ընկերութեան մի խումբ անդամներ պահանջում են նշանակել անյապաղ արտակարգ ժողով: Չար լեզուները պատմում են, որ այս բոլոր խառնակչութիւնը պատճառել է մի պարոն, ձեռքն առած մի քանի բուրժուա աղաների, ուզում է իր եռն ու բնութիւնը առաջ տանել և ուրիշ ոչինչ:

Արշամ Տէր-Խաչատրեան

## ԽՐԻՄԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Համաձայն Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի ս. առաջնորդի սոյն տարվայ ապրիլի 8-ից գրութեան՝ Տաւրիկեան նահանգի հայոց ուսումնարանների ուսուցիչներն ու ու հոգաբարձուները, հաւաքվելով ապրիլի 17-ին Սիմֆերօպոլի հայոց ուսումնարանը, ժողովներ արեցին, ընտրելու Էջմիածնում մայիսի 7-ին գումարվելիք դպրոցական համագումարի համար երկու պատգամաւոր՝ մի ուսուցիչ և մի հոգաբարձու:

Ուսուցիչների ժողովը նախ դիմեց երեք թեկնածուների ընտրութեան՝ թերթիկներով ձայնատւութեան միջոցով: Ընտրվեցին հետևեալ երեքը. Վ. Բաբիեան (9 ձայն), Մ. Տարախչեան (7 ձայն) և Մ. Յարութիւնեան (6 ձայն): Ապա ժողովը դիմեց գաղտնի քուէարկութեան տափերով, որից յետոյ յայտնվեց, որ Վ. Բաբիեան ունի 8 սպիտ. 2 սև և 1 խոր., Մ. Յարութիւնեան՝ 2 սպիտ., 8 սև և 1 խոր., իսկ Մ. Տարախչեան ընտրողական քուէ չը ստացաւ:

Հոգաբարձուների ժողովը պատգամաւոր ընտրեց Ղարասուբազարի հայոց ուսումնարանի հոգաբարձու՝ Յովհաննէս Յովակիմեան Սիլինեանին:

Ուսուցիչների և հոգաբարձուների ժողովները կայացրին մի շարք որոշումներ, որոնք կարելի է ամփոփել այսպէս.

I) Ուսուցիչների ժողովի կայացրած որոշումները.

1) Ի նկատի ունենալով, որ Տաւրիկեան նահանգի ծխական դպրոցների ուսումնարանական մասը դեռ ևս գտնվում է ռուսաց ինսպեկցիայի հսկողութեան ներքոյ,—հարց յարուցանել բարձրագոյն հոգևոր իշխանութեան առաջ, որ աշխատավի այդ հսկողութիւնը շուտափոյթ կերպով վերստին յանձնել հոգևոր իշխանութեան:

2) Մեր ծխական դպրոցները պէտք է առնուազն չորս տարվայ դասընթացք ունենան:

3) Ի նկատի ունենալով տեղական ուրոյն պայմաններն ու պահանջները՝ աշխատել որոշ չափով բաւարարութիւն տալ այդ պահանջներին, որպէս զի մեր դպրոցների շրջանաւարտները առանց մեծ դժուարութիւնների կարողանան մտնել պետական դպրոցների համապատասխան դասարանները: Դրա համար թուաբանութիւնը ա. բ. բաժանմունքներում պէտք է դասաւանդվի հայերէն, իսկ գ. և դ. բաժանմունքներում—ռուսերէն՝ հայերէնի օգնութեամբ:

4) Ի նկատի ունենալով, որ Տաւրիկեան նահանգի կրօնուսոյց քահանաները չեն կարողանում կանոնաւորապէս յաճախել դասերին՝ զրկել նրանց կրօնի դասերն աւանդելու իրաւունքից:

5) Կազմակերպել տեղական ուսուցչական միութիւն, որը լինելու է ընդհանուր հայոց ուսուցչական միութեան մի մասնաճիւղը:

6) Երգեցողութիւնը և գծագրութիւնը ճանաչել իբրև պարտադիր առարկաներ, որ անպայման դասաւանդվեն մեր բոլոր ուսումնարաններում:

7) Ուշ դարձնել աշակերտների՝ դասարանից դուրս ընթերցանութեան վրա:

II) Հոգաբարձուների ժողովի կայացրած որոշումները.

1) Մեր ծխական դպրոցներն ազատել ռուսաց ինսպեկցիայի հսկողութիւնից:

2) Թեմական դպրոցներին կից հիմնել մանկավարժական կուրսեր միամեայ դասընթացքով:

3) Ուսուցչի և հասարակութեան մէջ տեղի ունեցած դժգոհութեան դէպքում կազմվում է ժամանակաւոր մի քննիչ մարմին, բաղկացած հաւասար թւով անձերից՝ թէ ժողովրդի ներկայացուցիչներից և թէ ուսուցիչներից:

4) Խառն մանկավարժական ժողովներ ունենալ աշակերտների ծնողների հետ, վերջիններին տալով լոկ խորհրդակցական ձայն:

5) Իւրաքանչիւր ուսումնական տարվայ վերջին առնել ուսուցիչների համաձայնութիւնը և պայմանաւորվել առաջիկայ տարվայ համար:

6) Ուսուցիչները վարձատրվելու են իրանց ունեցած շաբաթական դասերի քանակութեան համեմատ, պահելով առարկաների բաժանումը առաջնակարգների և երկրորդականների: Շաբաթական դասագին minimum-ը նշանակել՝ առաջնակարգ առարկաների համար 35 րուբլի, երկրորդականների համար 25 րուբլի:

7) Երբ մի դպրոց իր միջոցներով անկարող է հոգալ իր պէտքերը, օգնութեան պէտք է գայ թեմական վարչութիւնը:

8) Բեսսարաբիայի թեմի պետական դպրոցներում մտցնել՝ բացի կրօնից՝ նաև հայոց լեզուի դասաւանդութիւնը:

Սիմ. Բաբիեան

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 8-ին

Խնդրում եմ երկտողս տալ «Մշակում»:

Կարեւոր գործով եկել էի Թիֆլիս: Ի նկատի ունենալով հայ-թուրքական ընդհարումների տակ ճնշված մեր ժողովրդի նեղ դրութիւնը և անարդար տուգանքների տակ հեծելը, մեր գիւղի կիսաշէն եկեղեցու հոգաբարձութիւնը յանձնեց ինձ մի ժապաւինեալ մատեան, որ տեղիս հարուստ ազգայիններից փող մուրամ, եկեղեցու կիսատը աւարտելու: Գործս աւարտելուց յետոյ դիմեցի նախ մեր հայրենակիցին, որը, ինչպէս միշտ, այժմ էլ իր առատաձեռնութեամբ առաջին օրինակը հանդիսացաւ. ապա, թէև հիւանդ, մօտս միւս հայրենակցիս եկեղեցին, ուր կայ մի ծերունի հարուստ քահանայ. նրան ևս առաջարկեցի և խնդրեցի ստորագրել... շատ խնդրեցի, կարծելով թէ «միայն ուզելու սովոր» տէրտէրներին հարուստի խղճի խայթոցը կը թելադրի մի խեղճ գիւղի կիսաշէն եկեղեցուն նուէր տալ. բայց սխալվեցի հաշւումս: Նա մերժեց. «գնացէք, ժողովրդից ուզեցէք» ասաց: Հարց ու փորձ էի արել, որ սա մօտ 40 հազար րուբլու տէր է, աւագ քահանայ է, կամիլաւկա, խաչ ունի և այլն, և այլն: Կարգակից հայրեր, էլ ինչ՞ու էք նեղանում, երբ ժողովուրդը երեսը թեքում է ձեզնից: Ե՞րբ պէտք է օրինակ հանդիսանաք:

Փակաս վատ չը վերաբերվեց և մի պարոն, որի եղբայրական շինութեան շրջապատը կը լինի կէս վերստ: Հարուստ պարոններ. ախըր ինչ՞ու էք մոռանում, որ այդ ոսկիքը գիտեք մէջքը կոտրած գիւղացի մշակի քրտինքներից: Ամօթ է: Մի խնայէք ձեր սեղանի փշրանքները... Սովրեցէք բարեգործութիւնը անել իբր պարտականութիւն:

Մեսրոպ քահ. Եղիկեանց

Ռոստով, ապրիլի 25-ին

«Մշակի» 85 համարում ի շարս հայութեան կեանք սղոցող հեռագրերի և տեղեկութիւնների, կարդացի նաև Թէօդոսիա քաղաքի հայ ժողովրդի 90 ստորագրութիւն կրող հեռագիրը՝ ապրիլի 20-ից:

Հեռագիրը սոսկալի իրողութիւններ է պատմում:

Բեսարաբիայի հայոց առաջնորդ Խուդավերդեան արքեպիսկոպոս Ներսէս, Թէօդոսիայի հայ ժողովրդին հոգեպէս մխիթարելու փոխարէն, ի ստրիւր ժողովրդի տուած բարութիւնների 1906 թ. առաջին ամսից մինչև այժմ, որքան է վրդովվել ժողովրդի հոգեկան ներքին կեանքը, որ ժողովուրդը այսօր զզւելով զգվում է յիշեալ եպիսկոպոսի անունը լսել իր եկեղեցում:

Սա ցաւալի և շատ ցաւալի երևոյթ է: Ես չեմ յիշում 50 տարվայ ընթացքում գոնէ մի առաջնորդի՝ որի անունը այս աստիճան զզւելի դառնար ժողովրդի համար: Խուդավերդեան արքեպիսկոպոս Ներսէս, ինչպէս հանգուցեալ Բաստամեան վարդապետն է բնորոշել նրա էութիւնը՝ և որքան ես ինքս եմ ճանաչում, մի ողորմելի տգէտ մարդ է: Մենք միշտ փայլել ենք այդ արտաքոյ կարգի տգէտներով. բայց այդ տգիտութիւնը սոսկալի չարիքների դուռ չէր բացել այնպէս, ինչպէս այսօր Թէօդոսիայում: Չորս ամիս շարունակ փակել եկեղեցիները, ժողովուրդը՝ մեծ ու փոքր զրկել սրբութիւնից, մեռածները թաղել առանց քահանայի, քահանային աքսորել երկիցս ոստիկանութեան և զինւորական իշխանութեան ձեռքով, սա ի՞նչ սոսկալի և խայտառակ առաջնորդութիւն է:

Եւ այս բոլորը ինչ՞ու համար,- միմիայն յագեցնելու վարդապետ սևագլուխ և սևասիրտ մարդու բարկութեան ծարաւը:

Ի՞նչպէս մի ծխատէր քահանայ համարձակվում է քննական աչքով նայել իր առաջնորդի սխալ արարմունքներին: Առաջնորդը տուեց մի հրաման, սխալ թէ ուղիղ՝ քահանան իբրև ստորադրեալ՝ պէտք է հպատակվի այդ հրամանին, ապա թէ ոչ՝ բարձրագոյն իշխանութեան հրամանով և ճիպտով դուրս թեմից:

Այսօր Բեսարաբիայի առաջնորդ Ներսէս, այդպիսի մի ճիպտով վանել է Թէօդոսիայի հայոց քահանայ Ներսէս Հերթեցեանին, որը առաջնորդի սխալ արարմունքների մասին օրինական ճամբով է ներկայացրել Սինոդին: Առաջնորդի կառավարութեան սահմանը կարել է, էլ ո՛չ Սինոդ, ոչ Էջմիածին և ոչ էլ ժողովուրդ է ճանաչում Խուդավերդեան առաջնորդը:

Ես նուաստս, քաջ ծանօթ լինելով Խուդավերդեանի բարոյական կեանքին և նրա առաջնորդական օգտակարութեան գործին՝ միացնում եմ իմ կատարեալ դժգոհութիւնը Թէօդոսիայի հայ ժողովրդի իրաւացի դժգոհութեան, յայտնում եմ անձայր զզւանք առաջնորդի այդ խայտառակ խաղին:

Տ. Բաստամեան

Եալտա, մայիսի 5-ին 1906 թ.

Կարդացի ձեր լրագրում իմ մասին մօրս յայտարարութիւնը որ, իբր ես կորած եմ և կամ չորս ամիսէ ի վեր նամակ գրած չեմ երկիր: Այդ թիւրիմացութեան արդիւնք է: Յայտարարում եմ ի գիտութիւն հասարակութեան, որ դեռ ողջ եմ, մեռած չեմ և սրանից մի ամիս առաջ նամակ գրած եմ երկիր: Ի վկայութիւն իմ գրութեան՝ հասցէն ֆրանսերէն ու տաճկերէն գրել տված եմ, պ. Գրիգոր Վարդանեանի: Ամօթ այն պարոններին, որ չը մեռած մարդուն մեռած են յայտարարում իր ծնողքի առաջ: Այս յայտարարութեան հետ երկիր հեռագիր ուղարկեցի իմ ողջութեան լուրը տալու ծնողքիս:

Միսաք Պօտիկեանց

## ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

Թէև մի քիչ ուշ, ես կուզենայի զրուցել ընթերցողիս հետ նորերս կայացած փոխառութեան մասին, նախ որ «այս խմորը շատ ջուր պիտի պահանջէ» հէնց որ Պետական Դուման գումարվի, ով գիտէ ինչ հետեւանքով. երկրորդ՝ որ «Մշակի» № 74 պ. Ռ.-ի այս նիւթին նուիրված յօդուածը պարունակում է սխալներ, որ հետաքրքիր ընթերցողը կը նկատէ համեմատելուց:

Բարձր բիւրօկրատիայի օրգան «Рус. Госуд.» ապրիլի 4-ի համարում անսովոր խոշոր տառերով մեծ գոհունակութեամբ յայտարարեց. «Երէկ, ապրիլի 3-ին երեկոյեան ստորագրվեց փոխառութեան պայմանագիրը որ հաւանութիւն գտաւ ֆինանսական կօմիտետի կողմից երեկոյեան նիստում»: Արժէր ցնծալ, քանի որ Մուկդէնի ամօթալի պարտութիւնից դէս բիւրօկրատիայի ջանքերը արտասահմանում փող ձեռք բերելու մասին ապարդիւն էին, չօգնեց և հոկտեմբերի 17-ի հռովարտակը...: Վերջերս երբ յոյս բացվեց, որ Դուման վերջապէս կը գումարվի, եւրոպական ֆինանսական շրջանները հակվեցին ձեռք մեկնել ռուս կառավարութեան, բայց սարսափելի, նմանը չը տեսնված պայմաններով, այն էլ մի այնպիսի մեծ պետութեան վերաբերմամբ, ինչպէս փաստօրէն մնում է Ռուսաստանը Եւրոպայի աչքում:

Փոխառութեան գումարն է $2^1/_4$ միլիարդ ֆրանք, կամ մեր փողով $843^3/_4$ միլիոն րուբլի: Յայտնի է, որ 100 րուբլին հաւասար է $266^2/_3$ ֆրանքի: Մեր տալիք տոկոսը հաւասար է 5-ի, որ ընդմիշտ ազատ պիտի լինի որ և է ռուսական հարկից, ասել է՝ նա կազատվի ոչ միայն այն 5 տոկոսային հարկից, որին ենթարկվում են բոլոր տոկոսաբեր թղթերը, այլ և ապագայ նկամտային հարկից: Մինչև 1916 թիւը Ռուսաստանը իրաւունք չունի, եթէ անգամ միջոցներ ունենայ վճարել այս պարտքը, կամ կօնվերսիայի ենթարկել. իսկ 1916 թ-ից դէն 40 տարվայ միջոցում պիտի հատուցանէ նրան, կամ կօնվերսիայի ենթարկէ: Փոխառութիւնը գլուխ բերող բանկիրները, օգտվելով դէպքից, այնպիսի պայմաններ խլեցին իրանց համար, որ անկախ և ազնիւ մամուլը թէ մեզանում, թէ արտասահմանում անուանեցին վաշխառուական: Իրաւ. 100 րուբլու փոխարէն մեր տէրութիւնը պիտի ստանայ 88 րուբլի, ի բաց առեալ միջնորդական վարձատրութիւնը, որ գործին լաւ տեղեակ մամուլը (տես «Рѣчь» № 46) հաշւում է 4—5%, ասել է անուանական 100 րուբլու փոխարէն մենք ստանալու ենք 83 կամ 84 րուբլի...: Եւ այս գումարն էլ ոչ թէ միանգամից, այլ չորս ժամանակամիջոցում. ապրիլին, յուլիսին, հոկտեմբերին և 1907 թւի յունվարին, գրեթէ հաւասար բաժիններով: Նոր փոխառութիւն առնել 2 տարվայ ընթացքում Ռուսաստանը իրաւունք չունի: Այս ամօթալի կէտը թէև չը հերքվեց պաշտօնապէս, բայց մնաց անորոշ՝ արդեօք վերաբերեալ Ֆրանսիայի շուկային, թէ համայն եւրոպական, հաւանական է, մեր կարծիքով, առաջինը ինչ ինչ պատճառներով, բայց աւելորդ ամ համաբում պարզել:

Բանկիրների դրած պայմաններից մէկն է, որ ինքը Ռուսաստանը մասնակցէ բաժանորդագրութեան և այն էլ խոշոր չափով. սա ի հարկէ, լաւ ապացոյց պիտի լինի եւրոպացի բուրժուայի կամ փոքր խնայողութիւն ունեցողի համար, որ փոխառութիւնը վտանգաւոր չէ. երկրորդ՝ որ այս տարվայ տոկոսը կը պահվի փոխառութիւնից գոյացած գումարից...: Փոխառութիւնը ահա ինչպէս է բաժանված. Ֆրանսիան իր վրա է վերցնում գրեթէ կէսը՝ մէկ միլիարդ 200 միլիոն ֆրանք, Ռուսաստանը 500 միլիոն ֆրանք, Լոնդոնը 330 միլ., Վիեննան 165 և Ամստերդամը 55 միլիոն ֆր.:

Այժմ քննենք փոխառութեան տնտեսական-ֆինանսական կողմը:

Յայտնի է ի հարկէ, ընթերցողին, թէ այժմ որքան էժան է փողի տոկոսը Եւրոպայում. $2^3/_4$—$3^1/_2$ տոկոս. գրեթէ միաժամանակ մեր փոխառութեան տեղի ունեցաւ գերմանական փոխառութիւնը $3^1/_2$ տոկոսից: Նոյն իսկ Ռուսաստանը, Վիշնեգրադսկու օրերում և ֆինանսական մինիստր այն ժամանակ սոսկ պ. Վիտտէի օրով, աչքի ընկնող է $3^1/_2$ տոկոսանի փոխառութիւն և այն էլ երկրի տնտեսական ճգնաժամի միջոցին՝ 91—92 թւականի սարսափելի սովից յետոյ: Այն ժամանակ մեզ տուել են 100-ի տեղ ոչ 88, այլ 94 ր. 75 կ. և ոչ 4—5 րուբլի միջնորդական վարձատրութիւն, այլ $2^1/_2$ րուբլի և դա համարվել է չափազանց: Այժմ տեսէք ինչ է բանից դուրս գալիս. 88 րուբլու տեղ մենք տալու ենք 5 րուբլի տոկոս, ասել է 100 րուբլուն 6%, երկրորդ ամեն 100 րուբլում մենք կորցնում ենք 16 րուբլի, որ եթէ բաժանելու լինենք 10 տարվայ ժամանակամիջոցի՝ կը ստանանք 1 ր. 60 կոպ., ասել է իսկապէս մենք տալու ենք 6 ր.+1 ր. 60 կ.=7 ր. 60 կոպ. տոկոս. եթէ 10 տարուց յետոյ ցանկանանք այս պարտքից ազատվելու, որովհետև այժմեանից որոշված է, որ այն ժամանակ մեր տէրութիւնը պիտի յետ գնի թղթերի անուանական արժէքով. օրինակ 187 ր. 50 կ. արժէթուղթը, որ այժմ կարելի է գնել 165 րուբլով, տասը տարուց յետոյ ինչ գին էլ որ ունենայ բօրսայում, տէրութեան գանձարանը գնելու է 187 ր. 50 կոպ.: Նոյն 16 րուբլին եթէ բաժանենք 50 տարվայ ընթացքի վրա, կը ստանանք 33 կոպ.: Ուրեմն մեր տալիք տոկոսը հաւասար է 6 ր. 33 կոպ.—7 ր. 60 կ., չը տեսնված տոկոս երկար ժամանակեայ փոխառութեան համար դեռ վարկը չը կորցրած մի մեծ պետութեան համար: Քանի որ բորսա է շպրտվում մի այսպիսի ձեռնտու և մեծաքանակ փոխառութիւն, քիչ տոկոս բերող արժէթղթերը պիտի զգան կուրսի անկում. յիրաւի մեր պարտքի մեծագոյն մասը բերնայի է վերածած, որ բերում է 4% կամ ուղիղն 3 ր. 80 կոպէկ, եթէ չը հաշւենք 5 տոկոսական հարկը: Արդ եթէ 88 րուբլի արժողութեան թուղթը տալիս է 5 տոկոս, ի՞նչ պիտի արժենայ մի արժէթուղթ, որ տալիս է 3 ր. 80 կոպ.: Գիմնազիայի երրորդ դասարանի աշակերտը ձեզ կասէ, որ 67 ր. 28 կոպ., այսինքն ընկնան, որ իսկոյն ընկաւ 74-ի, երբ տարածվեց փոխառութեան լուրը և նրա պայմանները. դեռ կարող է կորցնել 6—7 րուբլի...:

Եւրոպական բանկիրները մեր վզին կապելով ջրաղացաքարը, բաւական չը համարեցին և ստիպեցին, որ մօտ 200 միլիոն րուբլու արժէթղթեր հալեցնենք մեր երկրում: Եւրոպական պատերազմի ժամանակ նոյնպէս տեղի ունեցաւ խոշոր ներքին փոխառութիւն, որի դէմ բողոքեց տնտեսական հարցերին տեղեակ մամուլը. այժմ երկրից խլվում է 200 միլիոն րուբլին. ասել է մեր բանկերը այդ գումարով պիտի աղքատանան, մեր առևտուրը, մեր արդիւնաբերութիւնը այդ գումարի չափ դրամագլխից զրկվում են, որ պէտք է նրանց առաջ մղէր: Յայտնի է թէ ինչ բարձր մակերեւոյթի վրա է կանգնած այժմ զեղչը (учетъ) որ, ի հարկ է, իր ազդեցութիւնն ունի առևտրի և արդիւնագործութեան վրա, այժմ զեղչի ընկնելը աւելի հեռացվում է...:

Ո՞րքան գումար կը մնի վերջ ի վերջոյ մեր տէրութեան գանձարանը այս փոխառութիւնից. $843^3/_4$ միլիոնից մենք կորցնում ենք շուրջ 135 միլիոն (100 րուբլուն, ինչպէս ասացինք, 16 րուբլի), աւելացրէք և մէկ տարվայ տոկոսը, որ $843^3/_4$ միլիոնից հաւասար է 42,187,500 րուբլի, որ մնալու է բանկերում, ասել է գանձարանը կը ստանայ $664^1/_2$ միլիոն րուբլի: Ինչպէս աւելի պակաս. արդէն լսվում է որ առաջացող մամուլին տուած է 7 միլիոն ֆրանք,

կամ մեր փողով 2 միլիոն 600 հազար րուբլի. նշանաւոր գումարներ սովորաբար տրվում են суточныя, прогонныя, наградныя և այլն...: Այս փոխառութիւնը կատարված է մարտի 17-ի Բարձրագոյն ուկազի հիման վրա, որի մէջ նախատեսնված էր ծածկել այս պակասութիւնները, 1905 թւականից մնացած 180 միլիոնի պատերազմական ծախսը, նոյն թւի 150 միլիոն րուբլու կարճ ժամանակեայ փոխառութեան հատուցումը (յայտնի Մենդելսօնի անունով) և 481 միլիոն դեֆիցիտը, որ նախատեսնված է այս տարվայ բիւջէում. ասել է 180+150+481=811 միլիոն րուբլու կարիք, նոր փոխառութիւնը կը տայ 664 միլիոն րուբլի. ծրտեղից կը լրացնենք 147 միլիոնի պակասը... մնում է անորոշ:

Մենք դիտմամբ կանգ չառանք փոխառութեան քաղաքական նշանակութեան վրա, որ այս կամ այն կերպ կարելի է բացատրել, իսկ կաբինետի ֆինանսական պաշտօնը աշկարայ է... նոյն իսկ կոյրերի համար:

Պետրոս Զաքարեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ»-ի հետևեալ համարը, Համբարձման տօնի պատճառով լոյս կը տեսնէ շաբաթ մայիսի 13-ին:

—

Մայիսի 7-ին, Թիֆլիսի վրայով երկաթուղու գնացքով Բագու են ուղարկվել Սև Ծովեան նաւատորմի այն նաւաստիները, որոնք մասնակցել են նոյեմբերի ապստամբութեանը: Ինչպէս հաղորդում են «Волна» թերթին, Բագւում նրանց բաժանել են զանազան գնդերի վրա: Գնացքը Թիֆլիսից ճանապարհվելիս նաւաստիները երաժշտական նուագով հրաժեշտ են տուել ներկայ եղողներին «ուռա» գոչելով և գլխարկները ճօճելով: Կայարանի մօտիկ գտնվող զօրանոցից դուրս են թափվել սալդատ զինուորները (համարեա ամբողջ գունդը) ողջունելու նաւաստիներին երկու կողմից էլ գոչել են «կեցցէ ազատութիւնը»:

—

Թիֆլիսից «Р. С.» լրագրին հաղորդում են մի անհաւատալի լուր, որ իբր թէ Կարս ուղարկվում է ամէն օր ռազմամթերք, զօրք և որ պատերազմ է սպասվում ռուսաց և Թուրքաց պետութեան մէջ, և որ իբրև թէ Թուրքերը Կարսի սահմանում կենտրօնացրել են մեծ ույժ:

—

Մայիսի 4-ին, երեկոյեան ժամի 11½-ին, ռուսաց կանանց Փոխադարձ—Բարեգործական ընկերութեան պատգամաւորութիւնը գնաց Պետական Դումա և յանձնեց Դումայի անդամ Կեդրինին մի յայտարարութիւն ուղղված Կեդրինին և Պետրաժիցկուն, որով նրանք խնդրում էին իրանց այդ յայտարարութիւնը հաղորդել ի գիտութիւն Պետական Դումայի: Այդ յայտարարութեան մէջ ընկերութիւնը խնդրում է, ընդհանուր ձայնատուութեան հարցը վճռելու ժամանակ չը մոռանալ կանանց: «Р. В.»

—

Երգիծաբանական «Ядъ» թերթի խմբագիրը մայիսի 4-ին, դատաստանական պալատի կողմից, առանց դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեան, դատապարտվել է 25 րուբլի տուգանքի, զօրքի համար վիրաւորական ստայօդ լուրեր տարածելու պատճառով: Մեղադրվողը խնդրել է դատարանին կանչել իբրև վկաներ գեն. Կուրոպատկինին, Լինևիչին, Գրիպպենբերգին, Մինին, Ռիմանին և «Русь»-ի աշխատակից Վլադիմիրովին: Դատարանը մերժեց այդ խնդիրը: «Р. В»

—

Մայիսի 3-ին, Ցարսկոյէ Սելոյում, Ցարսկոյէնկի 147-րդ հետևակ գնդի մէջ թունաւորվել են 153 զինուորներ: Բժիշկները որոշել են, որ դրա պատճառը եղել է ուտելիքը, բայց որ ուտելիքը, ինչ կերակուր էր, բժշկական քննութիւնը չէ կարողացել պարզել: Բոլոր հիւանդ զինուորները այժմս բժշկվում են Կրասնօսելսկի զինուորական հիւանդանոցում: «Р. В.»

—

Երեքշաբթի, մայիսի 9-ին, «Թիֆլիսի Ժողովարանի» ամառային այգում, յօգուտ 3-դ արական գիմնազիայի չքաւոր աշակերտների կայացաւ ժողովրդական զբօսանք վիճակախաղով և բազարով, որը արդիւնքի կողմից բաւարար անցաւ: Մի քանի տասնեակ չքաւոր աշակերտների ուսման վարձը այդ արդիւնքից է վճարվելու, և այսպիսով նրանք հնարաւորութիւն կունենան շարունակելու ապագայում իրանց ուսումը:

—

Երկուշաբթի, մայիսի 8-ին, քաղաքիս 9-դ մասի Աւճալեան հրապարակի վրա գտնվող նպարավաճառ Տէր-Մելիքսեդեկեանի խանութն է մտնում բաշլուղով փաթաթված մի խմբէլ և պահանջում ծխախոտ, իսկ այդ միջոցին նրա ետևից ներս են խուժում 6 հոգի զինված խմբէլ-սրիկաներ և սկսում են կողոպտել խանութը: Պատահաբար մօտիկից անցնելիս է լինում պահակազինուորը, որը լսելով «օգնեցէք» աղաղակը մօտենում է դէպի խանութը, սակայն ճարպիկ սրիկաների խմբակը այս անգամ էլ կարողանում է ազատվել ու անպատիժ անյայտանալ:

—

Մայիսի 8-ին գիշերը Պուշկինի փողոցի վրա գտնվող Վարդան Ղամբարեանի մագազինի տակ գտնվող փուրից չարագործները մտել են Ղամբարեանի խանութը և, կոտրելով դրամարկղը, վերցրել են զանազան դոկումենտներ 400 րուբ. արժողութեամբ և 107 ր, 78 կ. կանխիկ փող, ոսկի 150 րուբլու, բրօնզա 100 րուբլու և զանազան գոյնի ներկեր նոյնպէս 100 րուբլի արժողութեամբ:

—

Մայիսի 9-ին Թիֆլիսում երեկոյեան 10 ժամին, Վասիլի Սեմեոնովի փուռը մտան րէվօլվերներով զինված 2 անյայտ երիտասարդներ, 5 անգամ կրակեցին Սեմեոնովի վրա, և տեղն ու տեղը սպանելով նրան, դուրս վազեցին փողոցը և անյայտացան: Կասկած կայ որ Սեմեոնովին սպանել է մի ժամանակ նրա արհեստանոցում գործադուլ անող բանուորներից մէկի ազգականը, որի համար նրանց արձակել էր, կամ նրա ցուցմունքով գործադուլի ժամանակ բանտարկվել և աքսորվել էին:

—

Մայիսի 9-ին երեկոյեան 3 ժամ 15 րոպէին 6 զինված անձինք, որոնցից մի քանիսը կօզակների համազգեստով, բաղխեցին Միքայէլեան և Ռեուտովսկի փող. անկիւն, Թուրքաշպատակ Մէլքօ Իկիրաբանովի տան դուռը և յայտնեցին որ ուզում են հաց առնել: Երբ դուռը բացվեց, չարագործները, մտնելով բակը նրանցից 4 մտան փուռը, իսկ մնացած երկուսը մնացին բակում: Ժանդարմի համազգեստ ունեցող անձը յայտնեց Մէլքօ Իկիրաբանովին, որ պէտք է խուզարկութիւն կատարեն և սկսեցին խուզարկել փուռը, բայց ոչինչ չը գտնելով այնտեղ, և գնալով վերևը խուզարկութիւն կատարեցին և մօտենալով երկաթէ դրամարկղին, ստիպեցին բանալ. երբ դրամարկղը բացվեց, հանեցին այնտեղից կաշուէ քսակ, որի մէջ գտնվում էր մինչև 300 րուբ. թղթադրամ: Բոլոր փողերը վերցնելով, չարագործները սկսեցին հեռանալ այդտեղից, մի և նոյն ժամանակ դրանցից երկուսը, մերկացնելով սրերը և րէվօլվէրները հանելով, սպառնացին այնտեղ գտնվողներին լռել և ապա անյայտացան: Կողոպտիչները նման էին ռուսներին և խօսում էին ռուսերէն:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

### ԻՏԱԼԻԱ

Ճիզվիտների նոր զօրապետ: Ինչպէս գիտենք, ճիզվիտական ուխտի գեներալ հայր Մարտինը նորերս վախճանվեց: Մահից առաջ նա կտակել է, որ իրան յաջորդ ընտրեն հայր Ռուջէրօ Իրեգգին, որ ազգով հռօմայեցի է. սակայն ուխտի կանօնադրութեան համաձայն, նրա նշանակումը պաշտօնի մէջ կարող է կայանալ միայն նախորդի մահից 6 ամիս յետոյ: Առայժմ նա վարում է փոխանորդի պաշտօնը: Նա է, որ պէտք է գումարէ ուխտի կօնկլավը:

### ՇՈՒԵՑԱՐԻԱ

Բենեսցովի գործը: Լօզան քաղաքի դաշնակցական դատարանը պէտք է քննէ այս օրերս Ռուսաստանի պահանջի հիման վրա, Ալէքսանդր Բենեսցովի աքսորման կամ յանձնման գործը: Այդ պարոնը պետն է այն յեղափոխականների խմբակի, որ ահաբեկեց Մօսկվայի վարկի ընկ. բանկի ծառայողներին և յափշտակեց 800,000 րուբլի դրամարկղից:

Սա առաջին անգամն է, որ դրվում է այսպիսի մի հարց, արդեօք զինուորական ձեռքով կատարված գողութիւնը քաղաքական յանցանք է: Բենեսցովը, որ միայն քսան տարեկան է, անդամ էր այն «դրուժինայի», որ առաջ բերեց Մօսկվայի ապստամբութիւնը: Նա պատկանում է յեղափոխականների ծայրահեղ ձախ թևին, որ բաժանվել է սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնից, որը չուզեց ընդունել մահափորձեր անձնաւորութիւնների և մասնաւոր սեփականութիւնների դէմ քաղաքական նպատակներով: Այնուամենայնիւ. գործված ոճիրը քաղաքական է նկատվում, որովհետև ույժով վերցրած գումարները պէտք է գործադրվէին զէնք գնելու Շուէյցարիայում: Փողերը այնքան քիչ են օգտվել այդ գումարից, որ Բենեսցովը դրամ է փոխ առել՝ արտասահման գնալու, չը կամենալով իր անձնական գործերի համար «յեղափոխական դրամից» օգտվել:

Շատ հետաքրքիր է իմանալ, թէ դաշնակցական դատարանը ինչպէս կը լուծէ այդ նոր հարցը: (Cour. Européen)

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սենատորներ Տուր, Շերբաչէվ, Նօըլինսկի, Սերգիէյվսկի, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի օգնական Կրիվօշէին, Բարձրագոյն հրամանով նշանակված են Պետական Խորհրդի անդամներ:

Հէյսէնի և Ս. Կօբուր-Գօտսկի դքսութիւնների մինիստր-րէզիդենտ իշխան Կուտուզէվ նշանակված է արտակարգ դեսպան Կօպենհագէնում:

Մայիսի 8-ին, երեկոյեան Շիպօվի նախագահութեամբ ֆինանսների մինիստրութեան մէջ բացվեց մասնաւոր խորհրդի նիստը՝ եկամտային հարկի ժամանակ առևտրական գաղտնիքը պահելու հարցը քննելու համար:

ԻՒՐԻԷՎ: Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեան հրամանով կազմվելու են հարկատու 1200 թաղամասեր—պետական 6 կալուածներում և 4 անտառապահութեան մէջ՝ կապալով տալու անհող և սակաւահող գիւղացիներին: Թաղամասերի մեծութիւնը 60 դեսիատին է: Կապալառուների ընտրութիւնը տեղի է ունենալու շրջանային խորհուրդների կողմից ընտրված լիազօրների աջակցութեամբ:

ՕԴԷՍՍԱ: Զինուորական դատարանը 6 տարվայ աքսորի դատապարտեց գիւղացի Բազեանին, որը սօցիալ-դեմօկրատիկական կուսակցութեան յանձնարարութեամբ Օդեսսա կայարանն էր տարել, Բէլցի ուղարկելու համար, 6 արճճեայ 2560 փամփուշտներով, 25 թռուցիկներ և յեղափոխական բնաւորութիւն կրող մի բրօշիւր:

ՊՈԼՏԱՒԱ: Միրգօրօդի բանտից ազատել են քաղաքական բոլոր բանտարկեալներին:

ՊԱՐԻԶ: Վաղը պաշտօնական լրագրում տպված կը լինի մի հրովարտակ, որի համաձայն կը կազմվի մի առանձին մասնաժողով, որ պէտք է մշակէ այն օրինագիծը, որ տալու է Պետական ծառայութեան մէջ եղող անձանց ընկերակցութիւններին մի քանի իրաւունքներ, պատկանող գլխաւորապէս պրօֆեսիօնալ սինդիկատներին:

ԼՕՆԴՕՆ: Ի հերքումն լրագրական տեղեկութիւնների, «Րէյտէրի» գործակալութիւնը հաղորդում է, որ Անգլիայի՝ Վէյ-հայ-վէյն Չինաստանին յանձնելու մասին ոչ մի խօսք անգամ լինել չէ կարող. այդ առիթով ոչ մի բանակցութիւն չէ վարվում:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ: Նահանգապետի հրամանով վերանորոգված խմբագրութեամբ սահմ.-ռամկավար կուսակցութեան օրգան «Ուրալեան երկիր» լրագիրը նորից լոյս կը տեսնի:

ՏՕԿԻՕ: Մօտ օրերս պաշտօնապէս կը հրատարակվի, որ Կամուրան նշանակվում է Լօնդօնում դեսպան:

ԲԵՐԼԻՆ, Վիւրտենբերգից հաղորդում են մեծ ջրհեղեղի մասին, որ ահագին վնասներ է պատճառել քաղաքին:—Արդիւնաբերողները աւելի և աւելի դժգոհութիւն են յայտնում, որ երկրագործական մեքենաներ Ռուսաստան ներմուծելու ժամանակ մեծ դժուարութիւններ են հանդիպում: Շատ ֆիրմաներ նման յայտարարութիւններ են ներկայացրել արտաքին գործերի մինիստրութեան:—Րէյխստագում—Շվէդ-գերմանական առևտրական դաշնագրի քննութեան ժամանակ կոմս Պօսադովսկին նկատեց, որ հակառակ վատ գուշակութիւնների Գերմանիայի կապած առևտրական դաշնագրերի նոր սիստեմը այժմ արդէն նպաստում է գերմանական արդիւնաբերութեան ծաղկման և բարգաւաճման:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ: Զէմստվային յայտնի գործիչ Կուշչ և բժիշկ Կրանցինֆէլդ կրկին ձերբակալված են Ալէքսանդրօվսկում և շուտով աքսորվելու են հիւսիս:

ՉԻՏԱ: Խօլշչէվնիկով և Ռումշէվիչ գեներալների գործի քննութիւնն սկսեց: Նրանք մեղադրվում են 51 և 100 և 175 յօդուածների հիման վրա: Վկաների թիւը 50 է: Գործը կը տևէ 3—4 օր:

10 մայիսի

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 9 մայիսի: Պարլամենտի արտակարգ նստաշրջանը բացվեց թագաւորական նամակի ընթերցումով: Թագաւորը շնորհակալութիւն էր յայտնում ռումիններին, նրանց՝ դէպի իւրքը տածած սիրոյ ու հաւատարմութեան և պետութեան վերանորոգման գործին աջակցելու համար: Նա սրտագին յիշում է նրանց այն անձնուէր ծառայութիւնները, որ մատուցին Ռումինիայի անկախութեան համար մղած պատերազմի դաշտում: Այժմեան յօբելեան հանդիսաւորութիւնը ամբողջ ազգի տօնն է. որ աւելի է մօտեցնում ժողովրդին և թագաւորական ընտանիքին: Նամակի ընթերցումից յետոյ եղան բուռն ծափահարութիւններ:

ՊՈԼՏԱՒԱ, 9 մայիսի: Երկաթուղային գործարանի բանուորները և ծառայողները հեռագրել են Պետական Դումային, պահանջելով լիակատար ամնիստիա, որի մէջ յիշվի նաև շարժման մասնակցող ծառայողների վերընդունելութեան որոշումը:

ԼՈՒԲՆԱ, 9 մայիսի: Բանտից ազատել են 11 գիւղացիներ: Մնում են դարձեալ քաղաքական մօտ 100 բանտարկեալներ:

ՍՄՕԼԵՆՍԿ, 9 մայիսի: Նահանգապետը ազատել է բանտից քաղաքական 17 բանտարկեալներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մայիսի: Պետերբուրգում բացվել է հրէական իրաւունքները միւս ազգերի հետ հաւասարեցնելու հարցով զբաղվող պատգամաւորական երրորդ համագումարը: Նախագահում է Դումայի անդամ Վինավէրը: Համաժողովի նպատակն է՝ կազմել Դումայում հրէական պատգամաւորներից պարլամենտական կուսակցութիւն: Համաժողովին ներկայ են 150 պատգամաւորներից աւելի:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 9 մայիսի: Թագաւորը իր արտասանած գահական ճառի մէջ ցաւ է յայտնում վերջին օրերս պատահած դէպքերի առիթով, որ խախտեցին սահմանադրական կեանքի սովորական ընթացքը, շնորհակալութիւն է յայտնում, որ Աստուածային նախախնամութեամբ վերացվեցին չարագուշակ թիւրիմացութիւնները, նոյնպէս յոյս է յայտնում, որ օրէնսդրութեան բոլոր ֆակտորների միանմուռ գործունէութիւնը անձեռնմխելի կը մնայ. յիշում է պապական պատգամաւորի պալատի նպատակները, և ասում է թէ դաշնակից մեծ պետութիւնների հետ ունեցած մերձաւոր յարաբերութիւնները և միւս պետութիւնների հետ բարեկամական կապերը հանդիսանում են հաշտութեան գրաւական, բայց և այնպէս անհրաժեշտ է հոգալ զինուորական ույժի մասին՝ զինուորական կազմի արտակարգ պահանջներին բաւարարութիւն տալու համար, և յայտնում է, որ նոր պատգամաւորների պալատը կը գումարվի հէնց որ վերջանայ ընտրողական բարենորոգումը:

ՄՕՍԿՎԱ, 9 մայիսի: Մօսկվայի քաղաքապետը վճռականապէս հերքում է լրագիրների այն լուրը, որ իբր Մօսկվայում տեղի շարժում ինտելիգենցիայի դէմ, և իբր մայիսի 14-ին անկարգութիւններ են տեղի ունենալու.—Մօսկվայի փիլադանտեական ինստիտուտը վճռել է այս տարի ուսանողներին ընդունել առանց աւարտման քննութեան:

ԲԷԼՕՍՏՕԿ, 9 մայիսի: Ուրաժսկի փողոցում, հին հանգստարանում երիտասարդների մի խումբ զինավարժութիւն էր կատարում. եկած պահակախումբը աշխատեց ձերբակալել նրանց: Սկսվեց հրացանաձգութիւն, որի ժամանակ վիրաւորվեցին երկու զինուոր:

ՏՕԿԻՕ, 8 մայիսի: Գերմանիայի դեսպանը Միկադօյին յանձնեց ընծայագրերը:

—

1·06 թ. մայիսի 1-ի խաղարկութեան տոմսերը տարան հետևեալ գումարները.

| Սերիայի նօմերներ | Տոմսակի նօմերներ | Շահած գումարներ | Սերիայի նօմերներ | Տոմսակի նօմերներ | Շահած գումարներ | Սերիայի նօմերներ | Տոմսակի նօմերներ | Շահած գումարներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 033 | 37 | 500 | 5555 | 33 | 10000 | 10694 | 22 | 500 |
| 078 | 04 | 8000 | 5574 | 18 | 500 | 10714 | 48 | — |
| 094 | 37 | 500 | 5605 | 47 | — | 10766 | 02 | — |
| 310 | 29 | — | 5680 | 31 | — | 10815 | 32 | — |
| 413 | 43 | — | 5686 | 14 | — | 10857 | 06 | — |
| 497 | 42 | — | 5688 | 21 | — | 10972 | 31 | — |
| 516 | 25 | — | 6042 | 43 | 1000 | 11059 | 06 | — |
| 536 | 02 | — | 6055 | 01 | 500 | 11147 | 08 | — |
| 549 | 44 | — | 6064 | 19 | — | 11256 | 47 | — |
| 555 | 33 | — | 6160 | 38 | — | 11285 | 42 | — |
| 577 | 16 | — | 6198 | 10 | — | 11395 | 29 | — |
| 607 | 46 | — | 6230 | 44 | — | 11434 | 31 | 1000 |
| 616 | 39 | — | 6294 | 48 | — | 11490 | 39 | 5000 |
| 669 | 17 | — | 6340 | 04 | — | 11497 | 49 | 500 |
| 670 | 13 | 5000 | 6378 | 06 | 1000 | 11555 | 37 | — |
| 760 | 34 | 500 | 6391 | 46 | 500 | 11561 | 16 | — |
| 767 | 37 | — | 6445 | 09 | — | 11573 | 06 | — |
| 1003 | 14 | — | 6491 | 12 | — | 11626 | 09 | — |
| 1015 | 15 | 8000 | 6548 | 30 | — | 11659 | 38 | — |
| 1050 | 05 | 500 | 6653 | 03 | — | 1172? | 50 | 1000 |
| 1082 | 03 | — | 6653 | 41 | 1000 | 11758 | 07 | 500 |
| 1094 | 36 | — | 6660 | 28 | 500 | 11793 | 18 | — |
| 1161 | 37 | — | 6719 | 46 | — | 11834 | 41 | 1000 |
| 1305 | 05 | — | 6779 | 25 | — | 11860 | 18 | 1000 |
| 1347 | 36 | — | 6861 | 03 | — | 11863 | 29 | 500 |
| 1354 | 09 | 75000 | 6925 | 14 | — | 11895 | 47 | — |
| 1383 | 07 | 500 | 6967 | 15 | — | 12009 | 20 | — |
| 1484 | 27 | — | 7133 | 20 | — | 12096 | 14 | 1000 |
| 1524 | 46 | 1000 | 7181 | 42 | — | 12168 | 28 | 500 |
| 1569 | 36 | 500 | 7199 | 39 | — | 12169 | 38 | — |
| 1592 | 05 | — | 7419 | 30 | — | 12183 | 40 | — |
| 1646 | 39 | — | 7426 | 49 | — | 12354 | 12 | — |
| 1703 | 26 | 10000 | 7631 | 12 | — | 12427 | 50 | — |
| 1703 | 37 | 500 | 7640 | 25 | — | 12462 | 20 | — |
| 1716 | 21 | — | 7663 | 32 | — | 12464 | 19 | — |
| 1750 | 38 | — | 7703 | 38 | — | 12611 | 40 | — |
| 1798 | 28 | — | 7840 | 18 | — | 12776 | 34 | 5000 |
| 1864 | 40 | — | 7855 | 01 | — | 12837 | 37 | 500 |
| 1913 | 23 | — | 7930 | 18 | — | 12903 | 44 | — |
| 1952 | 06 | — | 7933 | 47 | — | 12913 | 10 | — |
| 2002 | 47 | 8000 | 8001 | 48 | — | 13050 | 31 | — |
| 2093 | 31 | 500 | 8017 | 02 | — | 13136 | 45 | — |
| 2152 | 10 | — | 8078 | 10 | — | 13204 | 21 | 1000 |
| 2281 | 14 | — | 8087 | 17 | — | 13219 | 21 | 500 |
| 2489 | 13 | — | 8092 | 46 | — | 13227 | 1 | — |
| 2513 | 38 | — | 8129 | 14 | — | 13247 | 43 | — |
| 2860 | 39 | — | 8182 | 29 | — | 13275 | 23 | — |
| 2901 | 6 | — | 82?0 | 32 | — | 13280 | 25 | — |
| 2909 | 2 | — | 8200 | 50 | — | 13445 | 04 | — |
| 3054 | 8 | — | 8383 | 21 | 5000 | 13513 | 1 | — |
| 3109 | 46 | — | 8396 | 28 | 500 | 13605 | 44 | — |
| 3163 | 24 | — | 8405 | 37 | — | 13634 | 13 | — |
| 3186 | 2 | — | 8406 | 36 | — | 13634 | 43 | 1000 |
| 3201 | 42 | — | 8451 | 42 | — | 13659 | 20 | 500 |
| 3205 | 30 | — | 8575 | 30 | 1000 | 13699 | 37 | — |
| 3272 | 28 | 5000 | 8596 | 8 | 500 | 13780 | 8 | — |
| 3320 | 21 | — | 8604 | 7 | — | 13789 | 15 | — |
| 3352 | 16 | 500 | 8775 | 3 | 10000 | 13841 | 42 | — |
| 3491 | 41 | — | 8873 | 39 | 1000 | 13843 | 15 | — |
| 3526 | 27 | — | 8971 | 12 | 500 | 13897 | 37 | — |
| 3535 | 42 | — | 9015 | 29 | — | 13902 | 47 | — |
| 3754 | 49 | — | 9096 | 44 | — | 13905 | 5 | — |
| 3788 | 48 | — | 9230 | 14 | 8000 | 13990 | 11 | — |
| 3828 | 20 | — | 09255 | 22 | 500 | 14055 | 14 | — |
| 3874 | 40 | — | 09349 | 48 | 1000 | 14109 | 47 | — |
| 3944 | 13 | — | 09396 | 29 | 500 | 14134 | 21 | — |
| 4079 | 40 | — | 09439 | 34 | — | 14157 | 07 | — |
| 4087 | 47 | — | 09441 | 29 | — | 14164 | 15 | — |
| 4106 | 06 | — | 09471 | 04 | — | 14429 | 12 | — |
| 4169 | 35 | — | 09502 | 44 | — | 14508 | 11 | — |
| 4169 | 43 | — | 09590 | 08 | — | 14520 | 48 | — |
| 4241 | 40 | — | 09674 | 18 | — | 14559 | 22 | — |
| 4280 | 44 | 25000 | 09717 | 43 | 200000 | 14623 | 24 | — |
| 4310 | 19 | 500 | 09769 | 20 | 500 | 14627 | 11 | — |
| 4344 | 25 | — | 09794 | 03 | 1000 | 14651 | 06 | — |
| 4375 | 38 | — | 09807 | 48 | 500 | 14658 | 43 | — |
| 4695 | 08 | — | 09823 | 28 | — | 14726 | 27 | — |
| 4720 | 44 | 1000 | 09865 | 39 | 1000 | 14744 | 11 | — |
| 4740 | 34 | 500 | 09794 | 36 | 500 | 14749 | 36 | — |
| 4761 | 16 | — | 09898 | 06 | — | 14824 | 48 | — |
| 4795 | 29 | — | 09991 | 37 | — | 14838 | 02 | — |
| 4800 | 32 | — | 10024 | 01 | — | 14892 | 13 | — |
| 4812 | 50 | — | 10037 | 31 | — | 14940 | 41 | — |
| 4823 | 37 | — | 10053 | 26 | — | 15006 | 38 | — |
| 4827 | 24 | — | 10173 | 46 | — | 15129 | 13 | — |
| 4842 | 48 | 400000 | 10229 | 19 | — | 15142 | 08 | — |
| 4906 | 24 | 500 | 10238 | 30 | — | 15155 | 15 | — |
| 5017 | 03 | — | 10295 | 15 | 1000 | 15188 | 47 | — |
| 5036 | 47 | — | 10391 | 16 | 500 | 15283 | 12 | — |
| 5058 | 43 | — | 10418 | 08 | — | 15357 | 13 | 500 |
| 5059 | 44 | — | 10420 | 36 | — | 15548 | 37 | 5000 |
| 5171 | 48 | — | 10467 | 34 | — | 15549 | 03 | 500 |
| 5218 | 26 | — | 10468 | 32 | 5000 | 15566 | 48 | — |
| 5259 | 21 | — | 10480 | 14 | 8000 | 16136 | 29 | — |
| 5317 | 41 | 1000 | 10501 | 41 | 500 | 15641 | 48 | 1000 |
| 5322 | 43 | 500 | 10516 | 36 | — | 15765 | 37 | 500 |
| 5389 | 12 | — | 10586 | 12 | — | 15679 | 26 | — |
| 5408 | 11 | — | 10596 | 14 | — | 15828 | 04 | — |
| 5433 | 28 | — | 10627 | 45 | — | 15851 | 06 | — |
| 5444 | 50 | — | 10670 | 44 | — | 15933 | 09 | — |

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՅԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԽԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար պայմանով:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ
Ամսիս 11-ին, առաւօտեան ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ Վանքի ծխականները հրաւիրվում են ժողովի երրորդ անգամ մի պատգամաւոր և մի թեկնածու ընտրելու, որ միւս եկեղեցիների պատգամաւորների հետ իրանց միջից ընտրեն 4 պատգամաւոր հայ-թուրքական խաղաղարար մասնաժողովին մասնակցելու, որ կայանալու է զինուորական նահանգապետի մօտ:
Այս ժողովը վերջնական է:
Ղ. աւագ քահ. Խարազեանց
1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու ծխականները հրաւիրվում են առաջիկայ կիրակի, մայիսի 16-ին ծխական ընդհանուր ժողովի, ընտրելու պատգամաւորներ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւն կազմելու համար: Ներկայ ժողովը շարունակութիւն է անցեալ կիրակի օրվայ ժողովի: Ժողովի սկիզբն է ցերեկվայ ժամի 12-ին:
(հ. շ. կ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑԸ
Ընդունում է հիւանդներին կովկասեան հանքային ջրերում Պեատիգօրսկում:
Հասցէն Ելիզավետինսկայա փողոց, ռուսաց եկեղեցու մօտիկ Արխիպօվի տունը, որտեղ Գրուպպի գրասենեակն է:
1—20

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, մայիսի 11-ին
ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ Օ. Մ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԸ
բարեհաճ մասնակցութեամբ տ. Զարէլի ու Թիֆլիսի ժողովարանի թատերասէրների խմբի կը ներկայացնէ
ԾԾՄԱՅՐՆԵՐ
կամ Մայրերի փոխանորդներ
Կոմէդիա 3 գործ. հեղ. Մ. Բրիէօյի. թարգ. Ս Հախումեանի:
Սկիզբն է ուղիղ ժամը 8½-ին
Տեղերի գները 3 ր. մինչև 85 կոպ.:

Նիւթական սաստիկ սուղ հանգամանքների պատճառով հնարաւորութիւն չունեմ իմ որդոցս ուսման ծախսերը հոգալ, որի պատճառով, ուսումնարանական վարչութեան որոշման համաձայն որդիքս հեռացրված են ուսումից, որոնցից մէկը 16 տարեկան 2-րդ արական գիմնազիայից, իսկ միւսը 17 տարեկան րէալական դպրոցից, ուստի բարեմիտ անձանց ուշադրութիւնն եմ դարձնում դէպի իմ որդոցս կրթական գործը և խնդրում եմ կարելի եղածին հանդիսանալ և շտապել օգնութեան հասնել, որպէս զի ուսումնարանից յետ չը դարձնեն որդոցս և հնարաւորութիւն տան նրանց շարունակելու թերի մնացած ուսումը:
Բարեմիտ անձինք, որոնք կարող են օգնել, թող դիմեն «Մշակի» խմբագրատունը: 1—3

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 145—300

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին: ամեն այն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 87—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԵԿԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7: Լերմօնտովսկայա փողոց, տուն № 16:
(ա. օ.) 20—50

Գանձակի նախկին
„ՑԵՆՏՐԱԼ"
հիւրանոցը վերջին հայ-թուրքական ընդհարումների պատճառով ՏԵՂԱՓՈԽՎԵԼ է իր բոլոր փառաւոր կահ-կարասիքով Թիֆլիս, Պուշկինսկայա փողոց, նոյն
„ՑԵՆՏՐԱԼ"
մակագրութեամբ. հիւրանոցի տէրը հրաւիրում է յաճախորդների ուշադրութիւնը՝ տալով գահաւորված մաքուր սենեակներ իր բոլոր յարմարութիւններով. սենեակների գները 80 կոպէկից մինչև 2 րուբլի:
Ալէքսանդր Յարութիւնեանց
(կ.հ.) 4—100

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃ
Հինգշաբթի, մայիսի 11-ին
Գ. ԽԱԺԱԿ
կը կարդայ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Հայերէն լեզւով
«Կառավարութեան ձեւերը Արեւմտեան Եւրոպայում»:
Սկիզբն է ցերեկվայ ժամը 11-ին:
Տոմսակների գները մատչելի են:
Տոմսակները ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ:
(չ. հ.) 2—2

Մողնու ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը որոնում է Գայիանեան օրիորդաց ուսումնարանի համար
ՄԻ ԲՆԱԿԱՐԱՆ,
որը պէտք է բաղկացած լինի 6—7 սենեակներից. բնակարանը լինի IV կամ V քաղաքամասերում: Առաջարկութիւններով դիմել հետևեալ հասցէով՝ Վօզնեսենսկի փողոց, № 10, երդուեալ հաւատարմատար պ. Ա. Փալանթարեանին:
2—5

ARMENIA
Այս ամսաթերթը, որ անգլիերէն լեզւով Ամերիկայի մէջ միակ պարբերականն է՝ հայկական դատին ծառայող՝ թեակոխեց իր երրորդ տարին: Ամէն գիտակից հայու պարտքն է բաժանորդագրուիլ անոր և նիւթապէս բարոյապէս քաջալերել զայն: Տարեկան բաժանորդագինն է միայն մէկ տոլար: Հասցէ.—Editor Armenia, P. O. Bgx 2285 Boston Mas[s]. U. S. A.
3—3

Ս. Գ. Տէրմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պաշտօնատուն դէմից նօտար Մղերովի: (և.հ.շ.) 11—100

Երկար տարիներ ժողովրդական դպրոցներում ծառայած ՄԻ փորձված ՈՒՍՈՒՑԻՉ դասեր է որոնում: Կարող է վարել գործակատարի, մասնաւոր քարտուղարի կառավարչի պաշտօն: Յանձն է առնում սրբագրութիւն կատարել: Հասցէն. Абасъ-Абасская пл., 3-ій Могнинскій тупикъ, д. № 3 верхній этажъ. 3—3

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արզութեան-Երկայնաբազուկի: Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 11 օրինակներ աշխատանքի համար.—գինն է ր. 10%—յատկացրված է հայ արհեստանոցին օգտին: Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչ փողոց, № 13:
(հ. կ. և.) 10—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերսկսեց ընդունել հիւանդներին Պեատիգօրսկում մայիսի 1-ից: Пятигорскъ, Верхній бульваръ № 14, д. Кн. Гирей. (և.հ.կ) 4—

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Լէւեամինսկայա փողոց № 8: (և.ո.)63—1


## ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

| | Պօստային | Մարդատար. | Արագ. | Ապր |
|---|---|---|---|---|
| Բագուից դուրս գալը | 4 ժ. 53 ր. ցեր. | 11 ժ. 03 ր. ցեր. | 12 ժ. 20 ր. գիշ. | 4 ժ. 03 ր. |
| Թիֆլիս հասնելը | 11 » 26 » » | 5 ժ. 25 ր. առ. | 1 ժ. 30 ր. գիշ. | 9 ժ. 37 ր. |
| Թիֆլիսից դուրս գնալը | 12 » 25 » » | 6 ժ. 01 ր. առ. | — | — |
| (Թիֆլիսի ժամանակով) | 1 » 24 » » | 6 ժ. 59 ր. առ. | — | — |
| Բաթում հասնելը | 1 » 38 ր. գիշ. | 7 ժ. 07 ր. եր. | — | — |
| Բաթումից դուրս գալը | 5 » 22 » » | 5 ժ. 24 ր. ցեր. | — | — |
| Թիֆլիս հասնելը | 6 » 11 ր. եր. | 6 ժ. 39 ր. առ. | — | — |
| Թիֆլիսից դուրս գալը | 6 » 58 » » | 7 ժ. 37 ր. առ. | 5 ժ. 35 ր. ցեր. | 10 ժ. 40 ր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 7 » 56 » » | 8 ժ. 35 ր. առ. | 6 ժ. 33 ր. ցեր. | 11 ժ. 38 ր. |
| Բագու հասնելը | 1 » 20 ր. ցեր. | 12 ժ. 42 ր. գիշ. | 6 ժ. 19 ր. առ. | 3 ժ. 55 ր. |
| Երևանից դուրս գալը | 12 » 02 » » | — | — | 11 ժ. 26 ր. |
| Կարսից » » | 3 » 57 » » | — | — | 3 ժ. 12 ր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 7 » 38 » եր. | — | — | 7 ժ. 06 ր. |
| Թիֆլիս հասնելը | 5 » 06 » առ. | — | — | 4 ժ. 49 ր. |
| Թիֆլիսից դուրս գալը | 11 » 12 » գիշ. | — | — | 3 ժ. 25 ր. |
| (Թիֆլիսի ժամանակով) | 12 » 10 » » | — | — | 4 ժ. 23 ր. |
| Ալէքսանդրօպօլից դուրս գալը | 10 » 30 » առ. | — | — | 2 ժ. 47 ր. |
| Երևան հասնելը | 1 » 55 » ցեր. | — | — | 6 ժ. 10 ր. |
| Կարս հասնելը | 4 » 23 » » | — | — | 8 ժ. 48 ր. |


Թիֆլիսի Ժողովարանի ամառային շինութեան մէ[ջ]
Ուրբաթ, մայիսի 12-ին
Վիրաբուժական բուժարանին կից կանանց հոգաբարձութեան միջոցները ուժեղացնելու համ[ար]
տեղի կունենայ
ՄԵԾ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ
Ծաղիկների տօն, ծաղիկների, յաւերժահարսների ընթացքը երկանիւ կառքերով, տիկնիկ կօնֆետտի
ՎԻՃԱԿԱԽԱՂ ԱԼԼԷԳՐԻ
ԳԻՆՆ Է 20 ԿՕՊ.
Պատգամախօս, ձիարշաւ, կարթ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ և ՊԱՐԵՐ
Օվերյօի ղեկավարութեամբ բուֆէտ, երաժշտութեան 2 խումբ, գինը մուտքի համար 25 կ.
մանուկները մինչև 10 տարեկան հասակը վճարում են 15 կոպ.:
Զբօսանքի սկիզբն է, ցերեկվայ ժամը 3-ին
1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,
Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և սպիտակ, մխալը 40 կոպ.
Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՏՏԻ ԵՒ ԳԷԴԴՕՆԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼ[Ի]
ՍԿՍԱԾ: Մեծ քանակութեամբ գնողներին զիջումն է լինում:
Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրաֆուգներ, նկարներ, քարտ[եզ]ներ, ձեռնարկներ և այլն:
(և.հ.շ.) Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ: 24—25


Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15